30. Քսանհինգերորդ մարդը հոգնած է:

4. Read the following sentence and write them with mathematical symbols.

1. Տասնհինգ անգամ վեցը հավասար է իննսունի:
2. Չորս հարյուր վաթսուներեքից հանած վեց հավասար է չորս հարյուր հիսունյոթի:
3. Քսանքից գումարած վեցը հավասար է երեսունմեկի:
4. Երեք հարյուր երեսուներեք անգամ վեցը հավասար է հազար ինը հարյուր իննսունյոթի:
5. Հիսունմեկը բաժանած երեքի հավասար է տանայոթի:
6. Հարյուր քսան անգամ հինգը հավասար է վեց հարյուրի:

7. Չորս միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր ութսուներկուսից հանած երեք միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար ինը հարյուր ութսուներկուսը հավասար է մեկ միլիոնի:
8. Յոթանասունյոթ անգամ յոթը հավասար է հինգ հարյուր երեսունիննի:
9. Հինգ հարյուր երեսունիննը բաժանած յոթանասունյոթի հավասար է յոթի:
10. Տասն անգամ տասը հավասար է հարյուրի:

Դաս Տասներկուերորդ

The Ablative Case

The ablative case is used to compose sentences that answer questions “from whom?”, “from what?” “of what?” and “from where?” Nouns have a specific form in ablative case. The specific form a noun has in ablative depends on the type of declension it has in genitive. The chart below summarizes the rule for forming the ablative case.

Formation of the Ablative Case			
Declension	ի, ություն	ու	ոջ, վա, ո, ա
Specific Rule	The word in normative + ից	The word in genitive + ց	The word in genitive + ից
Examples	սեղանից, հեռախոսից, պետությունից, կազմակերպությունից	գինուց, քամուց, օդուց, տարուց	ընկերոջից, քրոջից, ծամվանից, օրվանից, հորից, մորից, շնից, տանից

Examples of sentences using the ablative:

- 1) Դու որտեղից ես գալիս:
Where are you coming from?
- 2) Ես գալիս եմ Հրազդանից:
I am coming from Hrazdan (city).
- 3) Սա ինչից ես պատրաստում:
What do you make this of?
- 4) Դա պատրաստում եմ փայտից:
I make it of wood.

When a word ending with a vowel gets an ending which starts with a vowel, a consonant letter is often added. Notice that words which use the "վա" declension, get an additional ն which stands right before the ից ending, converting it to նից. So “from that day” would be “այդ օրվանից” not “այդ օրվաից.”

When adding an ending which starts with a vowel, the last vowel of a word is sometimes dropped. Thus, we get շնից instead of շանից.

Other Uses of the Ablative

The ablative case has many other uses. The following chart presents a few examples:

comparisons	“besides”
-------------	-----------

Սև կովը սպիտակ կովից մեծ է: The black cow is bigger than the white cow.	Բոլորը բերում են իրենց քնապարկերը՝ բացի Վահեից: Everyone brings their sleeping bag but Vahe.
“depends on”	to be good or bad at something
Առողջությունդ կախված է քո վարքից: Your recovery depends on your behavior.	Ես մաթեմատիկայից լավ եմ, բայց ուղղագրությունից՝ վատ: I am good at mathematics but bad at spelling.
in a certain amount of time	“since”
Հինգ օրից գնալու եմ տուն: I am going home in five days.	Ժամը հինգից սպասում ենք Գոհարին: We have been waiting for Kohar since 5 o'clock.
of a group	
Ոստիկաններից երկուսը ռուս են: Two of the policemen are Russian.	

The ablative case is also used to express “of something” like in “being scared of something.”
The following verbs employ “of” in this manner:

զգուշանալ	to beware of, to take precaution against
ամաչել	to be embarrassed of
ձանձրանալ	to be sick of
հոգնել	to be tired of
գանգատվել	to complain of
վախենալ	to be scared of
ուշանալ	to be late of

1) Ծեր մարդիկ վախենում են մահից:
Old men are scared of death.

2) Դուք գանգատվում եք հեռախոսից:
You complain of the phone.

Countries, Nationalities, and Language:

Most country names in Armenian end in “-իա” or “-ստան.”

The great majority of nationalities are formed by the ending “-ացի” to the country name.

Most names of languages are formed by adding “-երեն” to the root stem of the country.

The country		The nationality	The language
Ադրբեջան	Azerbaijan	ադրբեջանցի	ադրբեջաներեն
Անգլիա	England	անգլիացի	անգլերեն
Ամերիկա	America	ամերիկացի	անգլերեն
Գերմանիա	Germany	գերմանացի	գերմաներեն
Իտալիա	Italy	իտալերեն	Իտալացի
Հայաստան	Armenia	հայ	Հայերեն
Վրաստան	Georgia	վրացի	Վրացերեն
Թուրքիա	Turkey	թուրք	Թուրքերեն
Պարսկաստան	Iran	պարսիկ	Պարսկերեն
Ֆրանսիա	France	Ֆրանսիացի	Ֆրանսերեն

DIALOGUE: ԼԵԶՈՒՆԵՐ և ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ / LANGUAGES AND NATIONALITIES

_ Ես ձեզ չեմ հասկանում:	Yes dzez chem haskanum.	I do not understand you.
_ Դուք խոսում եք անգլերեն:	Duk` khosum ek` angleren?	Do you speak English?
_ Այո, ես խոսում եմ անգլերեն: Բայց վատ եմ խոսում անգլերեն:	Ayo, yes khosum em angleren. Bayts` vat em khosum angleren.	Yes, I speak English. But I speak English poorly.
_ Դուք խոսում եք ռուսերեն:	Duk` khosum ek` r`useren?	Do you speak Russian?
_ Այո, ես խոսում եմ Ռուսերեն: Ռուսերենն իմ երկրորդ լեզուն է:	Ayo, yes khosum em r`useren. Ruserenn im yerkrord lezun e.	Yes, I speak Russian. Russian is my second language.
_ Դուք խոսում եք գերմաներեն:	Duk` khosum ek` germaneren?	Do you speak German?
_ Ոչ, ես գերմաներեն չեմ խոսում: Բայց ես հասկանում եմ գերմաներեն:	Voch, yes germaneren chem khosum. Bayts` yes haskanum em germaneren.	No, I do not speak German. But I understand German.
_ Դու խոսում ես չինարեն:	du khosum es chinaren?	Do you speak Chinese?
_ Ոչ: Չինարեն ոչ մի բառ չգիտեմ:	Voch. chinaren voch mi bar` chgitem.	No, I don't know a word in Chinese.

Իսկ դուք խոսում ե՞ք անգլերեն:	Isk duk` khosum ek` angleren?	Hi, do you speak English?
Այո, ես լավ եմ խոսում անգլերեն:	Ayo yes lav em khosum angleren.	Yes I speak English well.
Դուք անգլիացի՞ եք:	Duk` angliats`i ek`?	Are you from England?
Ոչ, ես անգլիացի չեմ: Ես ամերիկացի եմ: Իսկ դուք որտեղի՞ց եք:	Voch, yes angliats`i chem. amerikats`i em. Isk duk` vorteghits` ek`?	Yes No, I am not English, I am American. And where are you from?
Ես հայ եմ և ես Հայաստանից եմ:	Yes hay em, yev yes Hayastanits` em.	I am Armenian and I am from Armenia.

հասկանալ	understand	բայց	but
խոսել	speak	իսկ	and/but/while
լավ	well	ոչ մի	not one,
վատ	bad	որտեղի՞ց	where from?
լեզու	language		

New Words

Armenian Idioms

Idiom in Armenian	Literal translation	Meaning
Երես առնել	to gain face	to get spoiled
ինչ-որ մեկի բախտը բերել	someone's luck brings (goods) for one	to be lucky
գլուխն աշխատել	the head works	to be smart
իրար միս ուտել	to eat each others flesh	to fight each other, squabble
ջրից չոր դուրս գալ	get off the water dry	to avoid trouble, to get off the hook

Վարժություններ / Exercises

1. Fill in the blanks with a correct language, nationality or country word. Place corresponding words in correct grammatical form.

- Հայերը խոսում են _____:
- _____ խոսում են ռուսերեն:
- Մենք խոսում ենք անգլերեն, մենք _____ ենք:

4. Ֆրանսիայում խոսում են _____:
5. Թուրքերը չեն խոսում _____:
6. Վրացիները խոսում են _____:
7. _____ հայերեն չեն խոսում:
8. Իտալացիներն ապրում են _____:
9. Չինացիներն ապրում են _____:
10. _____ պարսկաստանում չեն ապրում:

2. Choose the right translation.

1. I help my parents.

- ա) Ես օգնում եմ իմ ծնողները:
- բ) Ես չեմ օգնում իմ ծնողներին:
- գ) Ես օգնում եմ իմ ծնողներին:

2. You kick the football.

- ա) Դու հարվածում ես գնդակին:
- բ) Դու գնդակը հարվածում ես:
- գ) Դու հարվածում ես գնդակ:

3. She loves yellow flowers.

- ա) Նա սիրում է դեղին ծաղիկներին:
- բ) Նա սիրում է դեղին ծաղիկներ:
- գ) Նա սիրում է դեղին ծաղիկները:

4. Vahram asks Sona.

- ա) Վահրամը հարցնում է Սոնա:
- բ) Վահրամը հարցնում է Սոնայում:
- գ) Վահրամը հարցնում է Սոնային:

5. The child is afraid of the car.

- ա) Երեխան վախենում է մեքենայից:
- բ) Երեխան վախենում է մեքենան:
- գ) Երեխան վախենում է մեքենայի:

6. I am careful of the dog.

- ա) Ես զգուշանում եմ շուն:
- բ) Ես զգուշանում եմ շանից:
- գ) Ես զգուշանում եմ շան:

7. Grandpa is bored of Ashot.

- ա) Պապիկը ձանձրանում է Աշոտի:
- բ) Պապիկը ձանձրանում է Աշոտ:
- գ) Պապիկը ձանձրանում է Աշոտից:

8. The little girl is ashamed of these women.

ա) Փոքր աղջիկն ամաչում է այս կանանցից:

բ) Փոքր աղջիկն ամաչում է այս կանայք:

գ) Փոքր աղջիկն ամաչում է այս կանանց:

9. No one complains of university.

ա) Ոչ ոք չի բողոքում համալսարանի:

բ) Ոչ ոք չի բողոքում համալսարանից:

գ) Ոչ ոք չի բողոքում համալսարան:

10. Everyone gets tired of this road.

ա) Բոլորը հոգնում են այս ճանապարհ:

բ) Բոլորը հոգնում են այս ճանապարհից:

գ) Բոլորը հոգնում են այս ճանապարհի:

3. Translate the following sentences into English.

1. Նրանք նայում են վայրի թռչուններին:

2. Անահիտը ծաղիկներ է նվիրում ընկերուհուն:

3. Աշակերտները մոտենում են արձանին:

4. Նրանք կոտրում են հեռախոսները:

5. Ես ուզում եմ զանգել քեզ, բայց հեռախոսիդ համարը չգիտեմ:

6. Ես Սամվելն եմ: Կարելի է խոսել Մկրտչյան Մագդայի հետ:

7. Դու նոր բջջային հեռախոս ես գնում:

8. Ես փնտրում եմ բաժակդ:

9. Դուք չեք ուտում միս:

10. Նա ուտու մ է գիլաս:

11. Մենք ավարտում ենք գործը:

12. Նա լվանում է ավսե:

13. Մենք չենք սպանում մարդ:

14. Նա հիշում է անունս:

15. Նա հոգնում է Մոսկվայից:

4. Translate the following sentences into Armenian.

1. One of those men is very tall. He is taller than the other two.

2. I come out of my home and see the man.

3. The bus goes slowly and I am late for my lesson.

4. The little girl is ashamed of the guests.

5. Ani is not afraid of her friends.

6. Your success depends on yourself.

7. The Germans are bored of the lesson.

8. Little Ani gets tired of the bus.

9. She is afraid of the black big dog.

10. You complain of four Georgians.

11. My sister is ashamed of your parents.

12. The driver always takes precautions of big cars.

13. These children get spoiled.

14. You are smart.
15. You do not get off the hook.
16. These children squabble all day.
17. You are always lucky!
18. You are being late of the class.
19. We are waiting for you since 3:00 o'clock.
20. One of the drivers is old.

5. Put the words in brackets in the right form.

1. Ոստիկաններն ուզում են բռնել _____ (հանցագործ):
2. Չի կարելի մերժել _____ (երեխաներ):
3. Ես ստուգում եմ իմ _____ (գրած):
4. Որսորդները չեն կարողանում բռնել այդ _____ (եղնիկ):
5. Գոհարիկը սիրում է ջրել _____ (ծառեր):
6. Փոքր տղան է պատռում _____ (գիրք):
7. Պապիկս ուզում է վաճառել իր հին _____ (մեքենա):
8. Շունը վախենում է _____ (գնդակ):
9. Ծեր կինը բողբոջում է _____ (կառավարություն):
10. Ես ամաչում եմ իմ _____ (վարորդ):
11. Բոլորը զգուշանում են այդ _____ (բժիշկ):
12. Նա շատ հոգնել է իր _____ (աշխատանք):
13. Չի կարելի մոտենալ _____ (ոստիկան):
14. Փոքր տղան ամեն օր պատռում է _____ իր (հագուստ):
15. Իմ հայրը երբեք չի մերժում իմ _____ (ընկերներ):

6. Make sentences with the following expressions and words.

Ստանալ հարազատից, ժառանգել ծնողներից, ամաչել խոսելուց, կախված լինել եղանակից, նայել, մոտենալ, նստել, պատասխանել, վախենալ, կոտրել, լսել, սազել:

7. Translate the following sentences into English.

1. Ծառից մի տերև եմ պոկում:
2. Գառներին առանձնացնում են մայրերից:
3. Արամն ընկերոջից նամակ է ստանում:
4. Անահիտը խորհուրդներ է հարցնում ծնողներից:
5. Չորսը փոքր է հինգից:
6. Արամը սիրում է խնձոր:
7. Կատուն վախենում է շնից:
8. Աղջիկը սեղանից վերցնում է մատիտը:
9. Տղան սիրում է աղջկան:
10. Ես Ավստրալիայից եմ:

Դաս Տասներեքերորդ

Instrumental Case

The instrumental case is used when in English we would use the prepositions “by” and “with” to answer the questions ինչն՞ով - “by what?”, ումն՞ով - “by whom?”, ինչն՞ով - “with what?”. The case is formed in the following way:

Formation of the Instrumental Case				
Declension	ի, վա, ա	ու	ոջ, ո, ա	ություն
Specific Rule	The word in normative + ով	The word in normative -ի + ով	The word in genitive + ով	Replace -ություն with ությամբ
Examples	սեղանով, պատով, ամսով, օրով, շնով, տնով	գինով, քամով, տարով	ընկերոջից, քրոջից, ժամկանից, օրվանից, հորից, մորով	պետությամբ, համբերությամբ, քաջությամբ

Here are sentences that use nouns in instrumental case:

- 1) Գորը միշտ մեքենայով է գալիս Երևան:
Gor always comes to Yerevan by car.
- 2) Նրանք գնում են ինքնաթիռով:
They are going by plane.
- 3) Մենք պաշտպանվում ենք մեր զենքերով:
We defend ourselves with our arms.

As these examples show, nouns in instrumental case are usually placed before the verb.

Words ending with the suffix -ություն have an additional way to form the instrumental case: they change the suffix -ություն to to the ending -ությամբ.

- 1) Նա քաջությամբ գերազանցեց բոլորին:
She exceeded everyone with courage.
- 2) Դու համբերությամբ լսում ես մարդկանց:
You patiently listen to people.

Words with ու declension form their instrumental by dropping the ի at the end of the word and adding վա to the word stem. For example, քամի - քամով, գինի - գինով, օղի - օղով, ոսկի - ոսկով etc.

- 1) Դուք վճարում եք ոսկով:
You pay with gold.

- 2) Վրացիները հպարտանում են իրենց գինով:
Georgians are proud of their wine.

Words with վա declension form their instrumental by adding -ով to the word stem. For example, օր - օրով, ամիս - ամսով, շաբաթ - շաբաթով etc.

- 1) Ես քեզնից երեք օրով մեծ եմ:
I am older than you with three days.
2) Նրանք հինք շաբաթով գալիս են Հայաստան:
They are coming to Armenia for five weeks.

There are many other uses of the instrumental case. The following chart contains a few examples:

through
Դու քայլում ես փողոցով: You walk through the street.
for a period of time
Նրանք տասն օրով են գնում Կանադա: They are going to Canada for ten days.
indicates manner
Նա իր ընկերոջը հաճույքով է նկարագրում: He describes his friend with pleasure.

Some phrases such as “to be proud of”, “to be interested in” and “because of” that do not require prepositions “with” or “by” are translated by words in instrumental in Armenian. Here are a few examples:

- 1) Նա հպարտանում է իր մեքենայով:
She is proud of her car.
2) Գործարարները հետաքրքրվում են գործարանով:
The businessmen are interested in the factory.
3) Նա հոգնում է դժվար աշխատանքի պատճառով:
He gets tired because of heavy work.

Locative Case

The locative case is used to denote the area where action takes place and usually functions as the English preposition “in.” The locative case is formed by adding "ում" to a noun in the nominative case.

- 1) Նա ապրում է Ապարանում:
He lives in Aparan.
- 2) Մենք աշխատանքը չենք ավարտում տասն օրում:
We do not finish the work in ten days.

The locative case can also be formed by placing the word "մեջ" after the word in the genitive case. This form of the locative is frequently used with animate objects.

- 1) Այս գրքի մեջ շատ նկարներ կան:
There are many pictures in this book.
- 2) Այս աղջկա մեջ մեծ հույս կա:
There is great hope inside this girl.

One oft-encountered exception to this rule is in the case of “home/տուն,” which becomes “տանը” to express “in home/at home.”

- 1) Դու ապրում ես քո պապիկի տանը:
You live at your grandfather’s house.
- 2) Նա իր շանը պահում է մեր տանը:
She keep her dog at our home.

There are a few cases where we would expect to use the locative case because we use the preposition “in” in English, but instead we use the “ին/ը” ending described previously.

- 1) Աղջիկը ձեռքին տիկնիկ ունի:
The girl has a doll in her hand.
- 2) Նրա աչքերին արտասուք կա:
There are tears in her eyes.
- 3) Նա չի ցանկանում լողալ այս ցրտին:
He doesn’t want to swim in this cold.

DIALOGUE: ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ / THANKS AND APOLOGIES

_ Շնորհակալություն Արմեն:	Shnorhakalut`yun Armen.	Thank you Armen.
_ Խնդրեմ:	Khndrem.	It is my pleasure!
_ Շատ շնորհակալ եմ:	Shat shnorhakal em.	I am very thankful.
_ Նորեն համեցեք	Noren hamets`ek.	You are welcome
_ Մերսի Կարեն ջան:	Mersi Karen jan.	Thanks dear Karen.

_ Չարժե:	Charzhe.	Not at all.
_ Ներողություն ուշանալու համար:	Neroghutyun ushanalu hamar.	I am sorry for being late.
_ Ոչինչ, պատահում է:	Vochinch, patahum e.	No worries. It happens.
_ Ես շատ մեղավոր եմ: Ներողություն:	Yes shat meghavor em. Neroghut`yun.	I am very guilty. Excuse me.
_ Խնդիր չկա: Մի մտածեք:	Khndir chka. Mi mtatsek`.	No problem. Don`t give it a thought.
_ Կներես: Ես չէի ուզում, որ այսպես ստացվեր:	Kneres. Yes chei uzum, vor ayspes stats`ver.	I am sorry. I did not want this to happen.
_ Անցած լինի:	Ants`ats lini.	Let bygones be bygones.

New Words

շնորհակալություն	thank you	ոչինչ	no worries
չարժե	Does not worth it, Do not mention it!	խնդիր	problem
նորեն համեցեք	You are always welcome!	կներես	sorry!
մերսի	Thanks! Merci!	մեղավոր	guilty
ներողություն	excuse me	անցած լինի	let bygone be bygone
ներել	to forgive, to excuse		

Armenian Idioms

Idiom in Armenian	Literal translation	Meaning
աչքով տալ	to strike with an eye	to bring bad luck onto something (usually by seeing it)
գլուխ հարթուկել	to iron someone`s head	to fool, to brainwash
կրակի հետ խաղալ	to play with fire	to do something dangerous
կրակին յուղ լցնել	to spill oil on fire	to aggravate the problem
հունի մեջ ընկնել	to get into its own path	(for a process) to get normalized

Վարժություններ / *Exercises*

1. Form the locative case of the following words.

1. Տուն, 2. բաժակ, 3. տուփ, 4. գլուխ, 5. գիրք, 6. սենյակ, 7. փողոց, 8. երկիր, 9. շոք, 10. գործ, 11. սիրտ, 12. դպրոց, 13. համակարգիչ, 14. մարդ, 15. պահարան, 16. սառնարան:

2. Fill in the blanks with the correct ending.

1. Դասարան _____ ուսուցիչը գրում է գրիչ _____, իսկ աշակերտը՝ մատիտ _____:
2. Այս շոգ _____ գյուղ կգնամ մեքենայ _____, բայց սովորաբար գնում եմ ոտք _____:
3. Վատ ճանապարհների պատճառ _____, մեքենան պետք է վարես զգուշությո՜ւն _____:
4. Հայաստանում մարդիկ հպարտանում են կոնյակ _____:
5. Պայուսակ _____ չկա մատիտ, բայց կա գիրք:
6. Նրանք չեն վախենում շան _____:
7. Այս տղաները չեն ապրում Երևան _____: Նրանք բոլորը եկել են Վանաձոր _____:
8. Վարորդը ուստիկան _____ խնդրում է ներել: Ուստիկանը մերժում է վարորդ _____:
9. Այս տան բոլոր սենյակներ _____ կան աթոռներ:
10. Վեցերորդ դասարան _____ երեխաները հետաքրքիր գրքեր են կարդում:

3. Translate the following sentences into English.

1. Բոլորը բացի Բաֆֆիից հոգնում են:
2. Ես աշխատում եմ ժամը 11:00-ից:
3. Այս զբոսաշրջիկներից երկուսը Իտալիայից են:
4. Մենք շներին բերում ենք մեքենայով:
5. Նա իր գրքերը միշտ գնում է այս խանութից:
6. Դուք երբեք չեք գալիս ձեր հեծանիվով:
7. Նրանք հագուստը լվանում են ձեռքով:
8. Ես միշտ ուշանում եմ հանդիպումից:
9. Նա երբեք չի ուշանում դասից:
10. Երեխան շուտ ձանձրանում է գրքից:
11. Տատիկը հետաքրքրվում է թոռնիկի հաջողություններով:
12. Հիվանդության պատճառով նա չի աշխատում:
13. Բոլորը ձանձրանում են վատ համերգից:
14. Դուք չեք վարում մեքենա:
15. Դժվար է ներել:
16. Հիմա դու կրակի հետ ես խաղում:
17. Նա սիրում է կրակին յուղ լցնել:
18. Նա լավ է գլուխ հարթուկում:
19. Ես լավ մեքենա ունեմ, բայց նա կարող է աչքով տալ:
20. Իմ կյանքը կամաց-կամաց հունի մեջ է ընկնում:

4. Translate this paragraph into Armenian.

There are many cities in Armenia. There are many beautiful statues, churches and museums in Yerevan. The “Mother Armenia” statue is in Yerevan. The statue of Davit Bek is in Kapan. Kapan is very far from Yerevan. The Garni temple is in Garni village. Garni village is not far from Yerevan. It is close to Yerevan. The mount Aragats is close to Yerevan. Mount Aragats is a high mountain. Every year many tourists come to Armenia. Tourists come to Armenia from Germany, France, Russia and Iran. All tourists see the “Mother Armenia” statue and Mount Ararat.

Դաս Տասնչորսերորդ

Adjectives

Adjectives are divided into two groups Those that:

1. Have comparative degrees (good, better, best)
2. Do not have comparative degrees

1) Let us first study adjectives with comparative degrees. One way to show a comparative degree is using words “ավելի քան” (more ... than) or “պակաս/նվազ ... քան” (less .. than).

- 1) Դու ինչպիսի ես:
You are smart.
- 2) Դու ավելի ինչպիսի ես, քան Աննան:
You are smarter than Anna.
- 3) Սա մեծ պայուսակ է:
This is a large bag.
- 4) Դա ավելի մեծ պայուսակ է, քան սա:
That is a bigger bag than this.

The comparative degree can also be expressed by using -ից ending. For example.

- 1) Հացը թանկ է:
Bread is expensive.
- 2) Գաթան հացից թանկ է:
Gata is more expensive than bread.
- 3) Ոսկին գաթայից թանկ է:
Gold is more expensive than gata.

Equal relationships with “as...as,” are translated by “նույնքան ... որքան” and unequal ones with “not....as” are translated by “այնքան ... չէ, որքան”.

- 1) Բիլը նույնքան ինչպիսի է, որքան իր եղբայրը:
Bill is as smart as his brother.
- 2) Բիլն այնքան ինչպիսի չէ, որքան իր եղբայրը:
Bill is not as smart as his brother.

For the superlative degree of comparison the ending “-ագույն” or the prefix “ամենա-” is used. For example:

- 1) Բիլն ամենաինչպիսին է:
Bill is the smartest.
- 2) Սոնան փոքրագույն երեխան է:
Sona is the smallest child.

Sometimes adjectives can take either the prefix or the suffix (not simultaneously). For example, words ամենափոքր and փոքրագույն both exist. However, some adjectives can take only the

prefix or the suffix. For example, the word *սսենսսենսսի* exist and is widely used, while *սսենսսի* does not exist.

2. Now let us move to adjectives that do not have comparative degrees. Adjectives that do not have comparative degrees end with the following suffixes: *-սկան*, *-ային*, *-յա/ե*, *-ավոր*. Several commonly used examples of each group of adjective is listed below:

<i>-սկան</i>			
մանկական	of a child	բնական	natural
սովորական	usual	սպասեցական	unexpectedly
կառավարական	governmental	արհեստական	artificial
հոգեբանական	psychological	բարոյական	moral
ֆիզիկական	physical	հասարակական	public

<i>-ային</i>			
դաշտային	the field's	ցերեկային	the day's
օդային	the air's	գիշերային	the night's
ձմեռային	of the winter	մարդկային	human
գարնանային	of the spring	տնային	of the home
ամառային	of the summer	հանրային	public
աշնանային	of the autumn	աշխատանքային	of work

<i>-յա/ե</i>			
սպասկյա	made of glass	քարե	rock
փայտյա	made of wood	կավե	clay
ոսկյա	golden	ռետինե	rubber
երկաթյա	iron	կաշվե	leather

<i>-ավոր</i>			
գլխավոր	main	կամավոր	volunteer
հանցավոր	criminal	գունավոր	colored
մտավոր	mental	գրավոր	written

ակնոցավոր

one who wears
glasses

բանավոր

oral

Adverbs

Adverbs have three common suffixes “-աբար,” “-որեն” and “-ալես.” Several commonly used examples of each group of adverb is listed below:

-աբար			
համեմատել	to compare	Համեմատաբար	comparatively
ընկեր	friend	Ընկերաբար	friendly
մայր	mother	Մայրաբար	motherly
դժբախտ	unlucky	Դժբախտաբար	unfortunately

-որեն			
արագ	quick	Արագորեն	quickly
լուրջ	serious	Լրջորեն	seriously
ազնիվ	honest	Ազնվորեն	honestly
ջերմ	warm	Ջերմորեն	warmly

-ալես			
անմիջապես	immediately	Հոգեալես	psychologically
ընդհանրապես	in general	պարզապես	simply
նմանապես	in the same way	բացարձակապես	absolutely
իսկապես	really	Ֆիզիկապես	physically

Adverbs are placed before the verb they refer to.

- 1) Հասնիկը մայրաբար օգնում է փոքրիկին:
Hasmik helps the small child as a mother would do.
- 2) Աշտուր արագորեն բացում է դուռը:
Ashot quickly opens the door.
- 3) Ձմռանը մենք ֆիզիկապես հանգստանում ենք:
In winter we rest physically.

Sometimes nouns in the instrumental case can be used as adverbs. “խաղաղություն” is a noun meaning “peace”, but when put into the instrumental case becomes “խաղաղությամբ,” which means “with peace” or “peacefully.”

- 1) Վեճն ավարտվում է խաղաղությամբ:
The argument ends with peace.
- 2) Նա համբերությամբ է աշխատում մարդկանց հետ:
He patiently works with people.

Some words, such as լավ and վատ can be used both as adjectives and as adverbs.

- 1) Անուշը լավ աշխատող է:
Anush is a good worker.
- 2) Անուշը լավ է աշխատում:
Anush works well.

DIALOGUE: ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ և ԱՆՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ / AGREEMENT AND DISAGREEMENT

_Գյումրին Հայաստանի ամենամեծ քաղաքն է:	Gyumrin Hayastani amenamets k'aghak'n e.	Gumri is the largest city in Armenia.
_Ոչ, Արմեն: Ես համաձայն չեմ: Գյումրին ամենամեծ քաղաքը չէ:	Voch Armen. Yes hamadzayn chem. Gyumrin amenamets k'aghak'a' che.	No Armeni. I disagree. Gyumri is not the largest city.
_Ո՞րն է Հայաստանի ամենամեծ քաղաքը:	Vorn e Hayastani amenamets k'aghak'a?	Which is the largest city in Armenia?
_Ես կարծում եմ, որ Հայաստանի ամենամեծ քաղաքը Երևանն է:	Yes kartsum em, vor Hayastani amenamets k'aghak'a' Yerevann e.	I think that the largest city in Armenia is Yerevan.
_Լուրջ ես ասում:	Lurj es asum?	Are you serious?
_Այո, իսկապես Երևանը Գյումրուց մեծ է:	Ayo, iskapes Yrevana' Gyumruts' mets e.	Yes, Yerevan is really larger than Gumri.
_Լավ, չեմ վիճում: Համաձայն եմ:	Lav, chem vitshum. Hamadzayn em.	OK. I do not argue. I agree.
_Դու ինձ ինը հազար դրամ ես պարտք:	Du indz ina' hazar dram es partk'.	You owe me nine thousand drams.
_Ոչ: Այդ ինչպե՞ս:	Voch. Ayd inchpes?	No! How so?

Երեկ ես քո փոխարեն վճարեցի ռեստորանում:	Yerek yes k`o p`okharen vtsharets`i r`estoranim.	Yesterday I paid instead of you at the restaurant.
Իսկապե՞ս: Ես չգիտեի: Շատ շնորհակալ եմ:	Iskapec? Yes chgitei. Shat shnorhakal em.	Really? I did not know. Thank you very much.

New Words

կարծում եմ	I think, I have the opinion	Միսալ	incorrect
համաձայն լինել	to agree	Միսալվել	to be mistaken
ճիշտ	right, correct	Վիճել	argue
լուրջ	serious	Իսկապես	really
վճարել	to pay	Փոխարեն	instead of
երեկ	yesterday		

Armenian Idioms

Idiom in Armenian	Literal translation	Meaning
մեկի առաջ վիզ ծռել	to bend the neck in front of someone	to ask someone, to make a request
մեկին խելքահան անել	to take someone's mind out	to make someone crazy (about something)
ինչ-որ բան ձեռքից գալ	(of something) to come of hands	to be able to do something (usually of manual work)
ձեռք առնել	to buy hand	to tease
գլխի ընկնել	to fall on head	to figure out, to guess, to understand

Վարժություններ / Exercises

1. Form the comparative and the superlative degrees of the following adjectives.

1. Մեծ, 2. սուր, 3. գեղեցիկ, 4. մոտիկ, 5. հարմար, 6. բարձր, 7. ցուրտ, 8. կանաչ, 9. արագ, 10. դառը, 11. աղի, 12. խաղաղ, 13. կարճ, 14. ուղիղ 15. վատ

2. Translate the following sentences into English.

1. Ածղահակը բարձր սար է: Արտանիշն ավելի բարձր սար է: Արագածը Հայաստանի ամենաբարձր սարն է:
2. Չարենցավանը մեծ քաղաք է: Գյումրին ավելի մեծ քաղաք է: Երևանը Հայաստանի ամենամեծ քաղաքն է:
3. Դեբեդը երկար գետ է: Ախուրյանն ավելի երկար գետ է: Արաքսը Հայաստանի ամենաերկար գետն է:
4. Խոզը մեծ կենդանի է: Կովն ավելի մեծ կենդանի է: Փիղն ամենամեծ կենդանին է:
5. Վանաձորում շոգ է: Երևանում ավելի շոգ է, քան Վանաձորում: Արմավիրն ամենաշոգ քաղաքն է:
6. Նա գիտի շատ մանկական խաղեր:
7. 2021 թվականը սովորական տարի է:
8. Դրանք կառավարական մեքենաներ չեն, դրանք սովորական մեքենաներ են:
9. Ես չեմ սիրում գարնանային օրերը, բայց շատ սիրում եմ ձմեռային օրերը:
10. Ամենակարևորը մարդկային լավ հարաբերություններն են:
11. Գարնանային օրերից հետո գալիս է ամառը:
12. Ամառվանից հետո գալիս է աշունը:
13. Աշնանային օրերից հետո գալիս են ձմեռվա ցուրտ օրերը:
14. Նա չի սիրում տնային գործերը, բայց շատ է սիրում հանրային գործերը:
15. Ես ունեմ ձմեռային կոշիկներ, բայց չունեմ ամառային կոշիկներ:
16. Գարնանը գյուղացիները սկսում են դաշտային աշխատանքները:
17. Ոստիկաններն արագորեն բռնում են գողին:
18. Դժբախտաբար մարդիկ ուտում են արհեստական սնունդ:
19. Աշնանը ես համեմատաբար քիչ եմ աշխատում:
20. Ես քեզ ընկերաբար խնդրում եմ:

3. Translate the following sentences into Armenian.

1. The glass cup is not as strong as the wooden cup.
2. Natural food is the best.
3. You always do your homework carefully.
4. A written exam is easier than an oral one.
5. Suzanna is a young girl who wears glasses.
6. Fall days are very pleasant in Yerevan.
7. They love physical work, but I like mental work.
8. Good human relations are the most important.
9. You buy a leather belt every year.
10. My parents do not have a house made of rock.
11. That is a moral issue.
12. She is proud of Armenia, but is not interested in public life.
13. All days are usual days.
14. I have two iron spoons, one golden spoon, and three wooden spoons.
15. The child reads a colorful book.

4. Form adjectives by adding the right suffix to following words.

1. Մանուկ, 2. հոգեբան, 3. ֆիզիկա, 4. կառավարել, 5. հասարակ, 6. գույն, 7. տուն, 8. դաշտ, 9. օդ, 10. գիշեր, 11. ցերեկ, 12. գլուխ, 13. ակնոց, 14. փայտ, 15. քար:

5. Translate the following sentences into English.

1. Սուրենը մաքրում է գետինը:
2. Անահիտը բերում է երկու կիլոգրամ հաց:
3. Նրանք հեշտությամբ տասը լիտր ջուր են բերում:
4. Մենք ազնվորեն չենք աշխատում:
5. Աղբեջանցիներն ընդհանրապես չեն լսում հայերին:
6. 2020 թվականը համեմատաբար տաք տարի է:
7. Գողն արագորեն գնում է բանկից:
8. Գողը բացարձակապես չի ամաչում:
9. Իմ պապիկի եղբայրները ֆիզիկապես առողջ են:
10. Դու այդ աղջկան մայրաքար սիրում ես:
11. Այս աղջիկը Գևորգին խելքահան է անում:
12. Ես ուզում եմ նրան խաբել, բայց նա միշտ գլխի է ընկնում:
13. Չի կարելի հիվանդ մարդկանց ձեռք առնել:
14. Հայրս ամեն ինչ կարողանում է պատրաստել: Նրա ձեռքից ամեն ինչ գալիս է:
15. Ամեն օր դու իմ առաջ վիզ ես ծռում:

6. Choose the right word from the brackets to form correct sentences.

1. Վարդանը _____ (լուրջ, լրջորեն) մարդ է: Նա _____ (ազնիվ, ազնվորեն) տղա է:
2. Լուսինեն _____ (արագ, արագորեն) վերցնում է ապակյա բաժակն ու ջուր խմում:
3. Նրանք իրենց աշխատանքը կիսում են _____ (ընկեր, ընկերաբար):
4. Իմ եղբայրն ինձ բարևում է _____ (եղբայր, եղբայրաբար):
5. Նրա տղան հիվանդ է: Նա _____ (դժբախտ, դժբախտաբար) մարդ է:

Դաս Տասնհինգերորդ

Past Progressive Tense

The past progressive tense is used for repeated action in the past or for an action that was in progress in the past. To form this tense, we must learn the past tense of լինել - “to be,” which is used as an auxiliary verb.

Ես էի (I was)

Մենք էինք (We were)

Դու էիր (You were)

Դուք էիք (You were)

Նա էր (He/she/it was)

Նրանք էին (They were)

1) Դու նրա ընկերներից մեկն էիր:

You were one of his friends.

2) Նա դպրոցի տնօրենն էր

S/he was the school's director.

To form the past progressive tense, we use the auxiliary verb “to be” in the past along with the same form of the verb, which we have been using for the simple present.

Ուտել		Կարդալ	
ուտում էի	ուտում էինք	կարդում էի	կարդում էինք
ուտում էիր	ուտում էիք	կարդում էիր	կարդում էիք
ուտում էր	ուտում էին	կարդում էր	կարդում էին

1) Անցյալ տարի ես սովորում էի Փարիզում:

Last year I was studying in Paris.

2) Կատուն ուներ տասը ձուկ:

The cat had ten fish.

3) Անցյալ շաբաթ բոլոր մեքենաները մաքուր էին:

Last week all cars were clean.

4) Ես առավոտյան վազում էի պարտեզում:

I was running in the park in the morning.

5) Գարնանը նրանք աշխատում էին դաշտում:

They used to work in the field in spring.

Above we said that in Armenian the present simple tense and the present continuous tense have the same structure. Unlike present tenses the past continuous and the past simple have different structures. Thus the sentence “Գարնանը նրանք աշխատում էին դաշտում” does not mean “They worked in the field in spring.” This sentence can mean either “They used to work in the field in spring” or “They were working in the field in spring.”


Vocabulary for the Past Tense

մեկ ժամ առաջ - one hour ago
երկու ժամ առաջ - two hours ago
երեկ - yesterday
երեկ չէ, առաջին օրը - the day before yesterday
անցյալ շաբաթ - last week
երկու շաբաթ առաջ - two weeks ago
անցյալ ամիս - last month
չորս ամիս առաջ - four months ago
անցյալ տարի - last year
չորս տարի առաջ - four years ago
(անցյալ) փետրվարի 4-ին - on (past) February 4

Future Indicative Tense

The future tense is formed by adding the ending “ն” to the infinitive form of the verb. This future formation can best be translated by “going to” structure in English. But in many cases it can be translated by “will” modal verb.

In the future tense the verb to be becomes:



- 1) Զբոսաշրջիկները լինելու են Ղափանում:
The tourists are going to be in Kapan.

All other verbs, both with “ալ” and “ել” ending follow the same pattern. For example,

Գրել		Ունենալ	
գրելու եմ	գրելու ենք	ունենալու եմ	ունենալու ենք
գրելու ես	գրելու եք	ունենալու ես	ունենալու եք
գրելու է	գրելու են	ունենալու է	ունենալու են

- 1) Տաս տարի հետո հայերն ունենալու են հարուստ պետություն:
Armenians are going to have a rich state after ten years.

2) Վարորդն իր մեքենան նորոգելու է շաբաթ օրը:
The driver is going to fix his car on Saturday.

Vocabulary for the Future Indicative Tense

մեկ ժամ հետո - after one hour
երկու ժամ հետո - after two hours
մեկ ժամից - in an hour
երկու ժամից - in two hours
վաղը - tomorrow
վաղը չէ, մյուս օրը - the day after tomorrow
հաջորդ շաբաթ - next week
երկու շաբաթ հետո - after two weeks
երկու շաբաթից - in two weeks
հաջորդ ամիս - next month
չորս ամիս հետո - after four months
չորս ամսից - in four months
հաջորդ տարի - next year
եկող տարի - next year, upcoming year
(եկող) փետրվարի 4-ին - on (upcoming) February 4

As we are now used to, the negative forms of both the past progressive and future tenses are formed by bringing the negative auxiliary verb before the verb itself. Here is “սիրել” conjugated in the past and future negative:

Past Negative

Ես չէի սիրում

Դու չէիր սիրում

Նա չէր սիրում

Մենք չէինք սիրում

Դուք չէիք սիրում

Նրանք չէին սիրում

Future Negative

Ես չեմ սիրելու

Դու չես սիրելու

Նա չի սիրելու

Մենք չենք սիրելու

Դուք չեք սիրելու

Նրանք չեն սիրելու

Both in past progressive and in future indicative tenses the interrogative is formed by placing the question mark on the last vowel of the verb.

Past Progressive

Ուտել - to eat

Ես ուտում էի

Was I eating?

մենք ուտում էինք

Were we eating?

դու ուտում էիր

Were you eating?

դուք ուտում էիք

Were you eating?

նա ուտում էր

Was s/he eating?

նրանք ուտում էին

Were they eating?

Future Indicative

Գրել - to write

ես գրելու՞ եմ	Am I going to write?	մենք գրելու՞ ենք	Are we going to write?
դու գրելու՞ ես	Are you going to write?	դուք գրելու՞ եք	Are you going to write?
նա գրելու՞ է	Is s/he going to write?	նրանք գրելու՞ են	Are they going to write?

Obviously there may be negative questions as well. Here are two examples:

1) Աշնանը նրանք չէին աշխատում:

Did not they used to work in fall?

2) Գարնանը մենք չենք խոսելու:

Aren't we going to speak in spring?

As each personal pronoun has its special auxiliary, the pronoun may be omitted.

“I bring bread” can be translated both as “Ես հաց եմ բերում:” and “Հաց եմ բերում:”

“You are going to bring bread” can be translated both as “Դու հաց ես բերելու:” and “Հաց ես բերելու:”

“She was bringing bread.” can be translated both as “Նա հաց էր բերում:” and “Հաց էր բերում:”

DIALOGUE: ՀԵՌԱԽՈՍԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ / TELEPHONE CONVERSATION

_ Լսում եմ:	Lsum em.	I am listening.
_ Բարև ձեզ: Ես բժիշկ Հայկ Արամյանի հե՞տ եմ խոսում:	Barev dzez. Yes bzhishk Hayk Aramyani het em khosum?	Hello! Am I talking to Dr. Hayk Aramyan?
_ Ոչ, սխալ եք զանգահարել:	Voch. Skhal ek` zangel.	No. You have dialed a wrong number.
_ Ներողություն:	Neroghut`yun.	Excuse me.
_ Այո՞:	Alo?	Hello?
_ Բարև ձեզ: Ես Ջոն Սմիթն եմ: Բժիշկ Հայկ Արամյանի հե՞տ եմ խոսում:	Barev dzez. Yes Jon Smith em. Bzhishk Hayk Aramyani het em khosum?	Hello! I am John Smith. Am I talking to Dr. Hayk Aramyan?

Ներեցեք, խնդրում եմ բարձր խոսեք: Չի լսվում:	Neretsek`, khndrum em bardzr khosek`. Chi lsum.	Sorry, please speak loudly. I cannot hear you.
Ես Ջոն Սմիթն եմ: Բժիշկ Հայկ Արամյանի հետ եմ խոսում:	Yes Jon Smitn em. Bzhishk Hayk Aramyani het em khum?	I am John Smith. Am I talking to Dr. Hayk Aramyan?
Այո, Հայկ Արամյանը ես եմ: Ինչո՞վ կարող եմ օգնել:	Ayo, Hayk Aramyana` yes em. Inchov karogh em ognel.	Yes, I am Hayk Aramyan. How can I help you?
Իմ գլուխը ցավում է: Ես ուզում եմ այցելել ձեզ:	Im glukha` ts`avum e. Yes uzum em ays`elel dzez.	I have a headache. I want to visit you.
Կարող եք հիմա գալ:	Karogh ek hima gal.	You may come now.
Շատ շնորհակալ եմ: Երկու ժամից կլինեմ ձեզ մոտ:	Shat shnorhakal em. Yerku zhamits` klinem dzez mot.	Thank you very much. I will be there in two hours.

New Words

լսում եմ	I am listening	ալո՞	Hello?
հետ	with	բարձր	1) high, 2) loud
... հե՞տ եմ խոսում	Am I talking to ...?	խնդրում եմ ...	please ...
սխալ եք գանգել	You have dialed a wrong number	բարձր խոսեք	speak loudly
ներողություն	Excuse me!	այցելել	visit

Վարժություններ / *Exercises*

1. Convert the following sentences from the present tense into the past progressive tense.

- Ես քսան տարեկան եմ:
- Ես աշխատում եմ մեծ խանութում:
- Իմ տունն աշխատանքի վայրից հեռու է:
- Դու ամեն օր նստում ես ավտոբուս:
- Նրանք ունեն մեկ մեծ կապույտ մեքենա:
- Նրա քույրն ունի տասներեք կատու:
- Եղբորս կինը սիրում է Վանաձորը:
- Նրանք չունեն շներ:

9. Դուք չեք նորոգում գիրքը:
10. Դու չես խոսում վրացերեն:
11. Երեխան չի ներում հորը:
12. Ես վարում եմ մեքենա:

2. Put the words in the correct order to make a correct sentence. The first word of each sentence is capitalized. The last word has full stop (:) next to it.

1. ամենամեծ, ապրում են, Նրանք տանը: գյուղի
2. լուծում էր, խնդիրը: բարդ, Ուսուցիչը
3. խեղճ, անցորդը, շանը: Զայրացած, հարվածում էր
4. էին, քամուց: ծառերն, Կանաչ, օրորվում
5. անգլերեն, Ժանետը, բոլորին, ուզում է, սովորեցնել
6. իր, Գևորգը, սիրում է, մեքենան, վարել
7. տարի, Գևորգն, ու իր եղբայրը, Անցյալ, ապրում, տանը: այս, էին
8. տարի, Երկու, ես, ամեն, առաջ, ուտում, օր, էի կիլոգրամ, երկու, շոկոլադ:
9. առաջին, չէ, Երեկ, օրը, գործարարը, էր, փողոցում: քայլում
10. ամիս, ամեն, առաջ, Երկու, հանդիպում, նրանք, էին օր:
11. ուր, գալու, Վաղը, տուն: է, մեր, երեխա
12. գնալու, Եկող, եմ, տարի, ես, Մոսկվա:
13. հանդիպելու, Վաղը, եմ: Վարդանին
14. Տասը, է, տարի, հարուստ, լինելու, հետո, Հայաստանը, երկիր:
15. հարցնելու, եմ, Ես, քո, ամեն, անունը: օր

3. Put the verbs in the following sentences in the future indicative tense.

1. Վաղը առավոտյան ես/ գնալ/ Գյումրի: _____
2. Մյուս շաբաթ ընկերս /գալ/ Գերմանիայից: _____
3. Այսօր մենք /ուտել/ սալաթ: _____
4. Երեքշաբթի օրը նրանք /խաղալ/ բասկետբոլ: _____
5. Երեք օրից ես այս գիրքը /տալ/ Արմենին: _____
6. Այս գործը ես /անել/ վաղը կեսօրին: _____
7. Կիրակի օրը քեֆին մենք /խմել/ զարեջուր ու զինի: _____
8. Մեր գրասենյակը /գրադվել/ հասարակական աշխատանքով: _____
9. Մի տարի հետո նրանք /վազել/ : _____
10. Չորս տարի հետո դուք Հայաստանում /չապրե՞լ/ :

4. Match the beginning and ends of sentences.

- | | |
|---------------------------|-----------------------------|
| 1. Ես վատ եմ զգում, | ա/ և գրում էր իր դիմումը: |
| 2. Անահիտին հանդիպելու | բ/ եմ վաղը: |
| 3. Բոլորը հոգնում էին | գ/ խաղում: |
| 4. Ամեն օր ֆուտբոլ էինք | դ/ Արսենի վատ խոսքերից: |
| 5. Անուշը սրում էր մատիտը | ե/ քանի որ գլուխս ցավում է: |

5. Translate the following sentences into English.

1. Փոքրիկ աղջիկն ուզում է բռնել գնդակը:
2. Ուսուցիչը ստուգում է աշակերտների աշխատանքը:
3. Պապիկը ջրում է փոքր ծառերը և ծաղիկները:
4. Չի կարելի պատռել քո ընկերոջ շապիկը:
5. Եկող տարի դուք վաճառելու եք ձեր բնակարանը:
6. Նրանք ամաչում են հյուրերից:
7. Հիմա ես փնտրում եմ քո մեծ կապույտ պայուսակը:
8. Հաջորդ շաբաթ ես գնալու եմ Գյումրի և այնտեղ ուտելու եմ խորոված:
9. Նրանք հոգնել են համակարգչից և ուզում են կոտրել համակարգիչը:
10. Դուք չեք լվանում ձեր ձեռքերը և երեսը:
11. Ես ամեն ինչ հիշում եմ և սպանելու եմ քեզ:
12. Ացած տարի մենք երեք ժամում էինք ավարտում այս աշխատանքը:
13. Ամռանը մենք ամեն օր ֆուտբոլ էինք խաղում:
14. Պապիկս սպորտով չէր զբաղվում:
15. Այս մարդու ձեռքից ամեն ինչ գալիս է:
16. Նրա գլուխն աշխատում է, և նա կարող է ցանկացած խնդիր լուծել:
17. Ես ուզում եմ հանդիպել նրա հետ:
18. Ամռանը ես զբաղվելու եմ այդ խնդրով:
19. Նրանք եկող տարի նորոգելու են իրենց տունը:
20. Չի կարելի հարվածել մարդկանց:

6. Form sentences in the past continuous using the following verbs.

Համաձայնել, տեսնել, լվանալ, կտրել, միացնել, հագնել, բացել, հիշել, ջղայնանալ:


7. Convert the following sentences from past progressive to future indicative tense. Make corresponding changes in the sentence.

1. Անցյալ տարի քո բախտը չէր բերում:
2. Ազահ գործարարներն իրար միս էին ուտում:
3. Երբ երեխա էր, նա միշտ ջրից չոր էր դուրս գալիս:
4. Տատիկիս գլուխն աշխատում էր:
5. Այս բժիշկը գլուխ չէր հարթուկում, նա ճիշտ էր ասում:
6. Դպրոցի աշխատանքը հունի մեջ էր ընկնում:
7. Կիրակի օրը նա կրակի հետ էր խաղում:
8. Նա չէր օգնում: Նա կրակին յուղ էր լցնում:
9. Մենք նրան խելքահան էինք անում:
10. Դուք Արամին ձեռք էիք առնում:

Դաս Տասնվեցերորդ

Simple Past

In Armenian the simple past is used to express action that was completed in the past. It is formed by replacing ալ/ել endings with աց/եց and the special endings.



The great majority of verbs change in the same way as shown below with գնալ “to go” and բերել “to bring”.

Գն-ալ -ալ declension		Բեր-ել -ել declension	
ես գնացի	մենք գնացինք	ես բերեցի	մենք բերեցինք
դու գնացիր	դուք գնացիք	դու բերեցիր	դուք բերեցիք
նա գնաց	նրանք գնացին	նա բերեց	նրանք բերեցին

1) Անցյալ տարի նրանք գնացին Անգլիա:
Last year they went to England.

2) Արամն Իրանից նվերներ բերեց ձեզ համար:
Aram brought gifts for you from Iran.

Some irregular verbs form their simple past with “ա” endings, like գտնել - “to find”, տեսնել - “to see”, տանել - “to carry”, ստանալ - “to receive” and իմանալ - “to know”, “to find out”.

Below verbs գտնել and տեսնել are conjugated.

Գտնել		Տեսնել	
ես գտա	մենք գտանք	ես տեսա	մենք տեսանք
դու գտար	դուք գտաք	դու տեսար	դուք տեսաք
նա գնաց	նրանք գտան	նա տեսավ	նրանք տեսան

Here are two sentences using simple past:

1) Վերջապես դուք գտաք մեր տունը:
Finally you found our home.

2) Նրանք Հրաչին գրադարանում տեսան:
They saw Hrach in the library.

Still other irregular verbs follow the above “ա” endings but also change their stem. The verbs գալ, ուտել and լինել are the most used irregular verbs of this type.

գալ		ուտել		լինել	
եկա	եկանք	կերա	կերանք	եղա	եղանք
եկար	եկաք	կերար	կերաք	եղար	եղաք
եկավ	եկան	կերավ	կերան	եղավ	եղան

Time

In Armenia 24 hour time is used in newspapers, on TV and in official papers and documents, but 12-hour time is used in spoken Armenian.

To start us off, the question “What time is it?” in Armenian is “Ժամը քանի՞սն է:”

If it is exactly on the hour, the answer can be:

$$\boxed{\text{Ժամը}} + \boxed{\text{hour}+(\text{ն})} + \boxed{\text{է:}}$$

Here are three examples:

3:00 Ժամը երեքն է: **5:00** Ժամը հինգն է: **11:00** Ժամը տասնմեկն է:

If it is past the hour, the word անց is used in the following manner:

$$\boxed{\text{Ժամը}} + \boxed{\text{hour}+(\text{ն})} + \boxed{\text{անց}} + \boxed{\text{minutes}} + \boxed{\text{է:}}$$

2:15 Ժամը երկուսն անց տասնհինգ է: **4:30** Ժամը չորսն անց երեսուն (կես) է:

Very often the word Ժամը - “the time” is omitted. Thus, people tend to read the time like this:

2:15 Երկուսն անց տասնհինգ է: **4:30** Չորսն անց երեսուն է:

If it is till the hour, the word պակաս is used in the following manner:

$$\boxed{\text{hour}(\text{ին})} + \boxed{\text{minutes}} + \boxed{\text{է}} + \boxed{\text{պակաս}}$$

3:40 Ժամը չորսին քսան է պակաս: **9:54** Ժամը տասին վեց է պակաս:

OR
Չորսին քսան է պակաս:

OR
Տասին վեց է պակաս:

DIALOGUE: ԺԱՄ ԵՎ ԺԱՄԱՆԴՐՈՒԹՅՈՒՆ / TIME AND APPOINTMENT

_ Ժամը քանի՞սն է:	Zhama` k` anisn e?	What time is it?
_ 2:50: Մենք դեռ ժամանակ ունենք:	Yerkusn ants hisun. Menk` der` zhamanak unenk`.	2:50. We still have time.
_ Ոչ, ես շտապում եմ: Ես պետք է Օպերա գնամ ժամը 3:30:	Voch. Yes shtapum em. Yes petk` e Opera gnam zhama` yerek`n ants kes`.	No. I am in a hurry. I must go to the Opera at 3:30.
_ Ինչու?:	Inchu?	Why?
_ Ես պայմանավորված եմ:	Yes paymanavorvats em.	I have an appointment.
_ Ու՞մ հետ պետք է հանդիպես:	Um het petk` e handipes?	Whom are you going to meet?
_ Պետք է հանդիպեմ Գայանեին:	Petk` e handipem Gayanein.	I must meet Gayane.
_ Ի՞նչ ես անում վաղը երեկոյան:	Inch es anum vagha` yerekoyan?	What are you doing tomorrow evening?
_ Վաղը երեկոյան ես ազատ եմ:	Vagha` yerekoyan yes azat em.	I am free tomorrow evening.
_ Արի գնանք Հյուսիսային պողոտա:	Ari gnank` Hyusisayin Poghota.	Lets to go the Northern Avenue.
_ Շատ լավ: Հաճույքով կգամ:	Shat lav. Hatshuykov kgam.	Very well. I will come with pleasure.
_ Ժամը 7:00-ին կարո՞ղ ենք հանդիպել Կարապի լճի մոտ:	Zhama` yotin karogh enk` handipel Karapi ltshi mot?	Can we meet at 7:00 near the Swan lake?
_ Այդ ժամին չեմ հասցնի: Արի հանդիպենք 7:20:	Ayd zhamin chem hasts`ni. handipenk` yot ants` k`san.	Ari I will not make it at that time. Lets meet at 7:20.
_ Եղավ: Մինչ վաղը ժ. 7:20:	Yeghav. Minch vagha` zhama` yot` ants` k`san.	OK. See you tomorrow at 7:20.
_ Պայմանավորվեցինք:	Paymanavorvets`ink`.	Deal!

New Words

Ժամանակ	time	շտապել	to be hurry
պայմանավորվել	to make a deal, to come to an agreement	ու՞մ	with whom? whose?

պայմանավորված լինել	to have an agreement (with someone)	նո՞մ հետ	with whom?
ինչու՞	why?	հանդիպել	meet
երեկո	evening	երեկոյան	in the evening
ազատ	free	պողոտա	avenue
կարապ	swan	լիճ	lake
կարողանալ	to be able	մոտ	Near
հասցնել	to make it, have enough time to accomplish something	արի	Lets
եղավ	OK	մինչ	Till
մինչ վաղը	till tomorrow		

Armenian Idioms

Idiom in Armenian	Literal translation	Meaning
մազից կախված լինել	to hang from a hair	to be in a dangerous situation, to be on the verge of loss
ջուրը պղտորել	to make water murky	to stir confusion especially in human relations
ձայնը կտրել	to cut the voice	to shut up
իրեն հիմարի տեղ դնել	to pretend to be stupid	to pretend not to understand facts that are not beneficial to one.
չլսելուն տալ	to pretend not to listen	to act as if one has not heard something that is not beneficial to one

Վարժություններ / *Exercises*

1. Translate the following sentences into English.

1. Սուրենը հասկացավ խնդիրը:
2. Վերջապես Հասմիկը համաձայնեց գալ:
3. Հայրս ծիծաղեց:
4. Ռուբեն Հախվերդյանը երգեց:
5. Երեկ դուք Աշոտի հետ զրուցեցիք:
6. Անցյալ ամռանը երեխաները շատ զբոսնեցին անտառում:
7. Երեկ ռեստորանում դու շատ խմեցիր:
8. Մենք Աննային տարանք դպրոց:

9. Երեկ դու գնացիր շուկա:

10. Նրանք հինգ շիշ կոկակոլա գնեցին:
11. Չորեքշաբթի օրը Չելսին հաղթեց Մանչեսթերին:
12. Բժիշկը երեկ օգնեց հիվանդին:
13. Հայերը վստահեցին Նիկոլ Փաշինյանին:
14. Վաճառողը պատասխանեց իմ հարցերին:
15. Ոչ ոք Արմենին չհավատաց:
16. Վարդանը նորից սխալվեց:
17. Ժամը երկուսն անց քսանհինգ նա եկավ:
18. Ուրբաթ օրը ժամը վեցին նա եկավ իմ տուն:
19. Շաբաթ օրը ժամը ութին մենք գնացինք Իջևան:
20. Երեկ գիշերը մենք չտեսանք Լուսինը:
21. Ոստիկանը գտավ հանցագործին:
22. Նա խանութից գնեց երկու գիրք:
23. Դու խանութից չգնեցիր հեռախոս:
24. Նրանք եկան Մոսկվայից:
25. Այս կոշիկները նա երեկ վերցրեց մեր տանից:

2. Match the two columns

- | | |
|----------|------------------------------------|
| ա. 12:00 | 1. երկուսն անց է տասնհինգ րոպե: |
| բ. 11:45 | 2. Ութ անց տաս է: |
| գ. 13:05 | 3. Տասներկուսն է: |
| դ. 14:15 | 4. Ութ անց կես է: |
| ե. 19:30 | 5. Տասն անց կես է: |
| զ. 20:10 | 6. Տասներկուսին տասնիհինգ է պակաս: |
| է. 9:35 | 7. Երեքին քսան է պակաս: |
| ը. 20:30 | 8. Յոթն անց կես է: |
| թ. 14:40 | 9. Ութին տասնինգ է պակաս: |
| ժ. 10:15 | 10. Մեկն անց է հինգ րոպե: |
| ի. 7:45 | 11. Տասին քսանհինգ է պակաս: |
| լ. 8:30 | 12. Տասն անց տասնիհինգ րոպե է: |

3. What time is it? Read the following times in Armenian.

- | | | |
_Գյումրին Շիրակի մարզում է:	Gyumrin Shiraki marzum e.	Gumri is in Shirak Marz (Region).
_Իսկ որտե՞ղ է Վանաձորը:	Isk vortegh e Vanadzora`?	And where is Vanadzor?
Վանաձորը Լոռվա մարզում է:	Vanadzora` Lor`va marzum e.	Vanadzor is in Lori Marz.
_Իսկ Եղեգնաձո՞րը:	Isk Yeghegnadzora`?	And where is Yeghegnadzor?
_Եղեգնաձորը Վայոց Ձորի մարզում է:	Yeghegnadzora Vayots` Dzori marzum e.	Yeghegnadzor is in Vayots Dzor Marz.
_Գյումրին Երևանի հյուսիսում է:	Gyumrin Yerevani hyusisum e?	Is Gumri to the north of Yerevan?
_Այո, Գյումրին Երևանի հյուսիսում է:	Ayo, Gyumrin Yerevani hyusisum e.	Yes, Gumri is to the north of Yerevan.
_Իսկ Վանաձո՞րը:	Isk Vanadzora`?	And Vanadzor?

_Վանաձորը նույնպես Երևանից հյուսիս է: Վանաձորը Գյումրիից արևելք է:	Vanadzora nunypes Yerevanits' hyusis e. Vanadzora Gyumriits' arevelk' e.	Vanadzor is also to the north of Yerevan. Vanadzor is to the east of Gumri.
_Իսկ որտե՞ղ է Եղեգնաձորը:	Isk vortegh e Yeghegnadzora'?	And where is Yeghegnadzor?
_Եղեգնաձորը Երևանից հարավ է:	Yeghagnadzora' Yerevanits' harav e.	Yeghegnadzor is to the south of Yerevan.
_Իսկ որտե՞ղ է Արարատ լեռը:	Isk vortegh e Ararat ler'a'?	And where is Mount Ararat?
_Առարարտ լեռը Երևանից արևմուտք է:	Ararat ler'a' Yerevanits' aryevmutk' e.	Mount Ararat is to the west of Yerevan.
_Որտե՞ղ է օպերայի շենքը:	Vortegh e operayi shenk'a'?	Where is the opera building.
_Օպերայի շենքը Մեսրոպ Մաշտոց պողոտայի վրա է:	Operayi shenk'a' Mesrop Mashtots' poghotayi vra e.	The opera building is on Mesrop Mashtots Avenue.
_Իսկ որտե՞ղ է Մատենադարանը:	Isk vortegh e Matenadarana'?	And where is the Matenadaran?
_Մատենադարանը նույնպես Մեսրոպ Մաշտոց պողոտայի վրա է:	Matenadarana' nunypes Mesrop Mashtots' poghotayi vra e.	The Matenadaran is also on Mesrop Mashtots Avenue.
_Մատենադարանն այստեղից հեռու՞ է:	Matenadarann aysteghits' her'u e?	Is the Matenadaran far from here?
_Ոչ: Այստեղից հեռու չէ:	Voch. Aysteghits' her'u che.	No. It is not far from here.
_Որքա՞ն պետք է քայլեմ Մատենադարան հասնելու համար:	Vork'an petk' e k'aylem Matenadaran hasnelu hamar?	How much must I walk to get to the Matenadaran?
_Մատենադարան հասնելու համար պետք է քայլեք քսան րոպե:	Matenadaran hasnelu hamar petk' e k'aylek' k'san rope.	You must walk 20 minutes to get to the Matenadaran.
_Իսկ ինչպե՞ս կարող եմ գնալ «Էրեբունի» թանգարան:	Isk inchpes karogh em gnal "Erebuni" t'angaran?	And how can I get to the "Erebuni" Museum?
_«Էրեբունի» թանգարան կարող եք գնալ տաքսիով:	"Erebuni" t'angaran karogh ek' gnal tak'siov.	You can go to the "Erebuni" Museum via taxi.
_Տաքսիով քանի՞ րոպեում կհասնեմ «Էրեբունի» թանգարան:	Tak'siov k'ani ropeum khasnem "Erebuni" t'angaran?	How long will it take me to get to "Erebuni" Museum via taxi?

Այստեղից տաքսիով երեսուն րոպեում կհասնեք «Էրեբունի» թանգարան:	Aysteghits tak` siov yeresun ropeum khasnek` “Erebuni” t` angaran.	From here you in 30 minutes will get to “Erebuni” Museum via taxi.
Որտե՞ղ է «Արարատ» ռեստորանը:	Vortegh e “Ararat” r` estorana`?	Where is the “Ararat” restaurant?
«Արարատ» ռեստորանը Թումանյան փողոցի վրա է:	“Ararat” r` estorana` T`umanyan p` oghots` i vra e.	The “Ararat” restaurant is on Tumanyan Street.
Ինչպե՞ս կարող եմ հասնել «Արարատ» ռեստորան:	Inchpes karogh em hasnel “Ararat” r` estoran?	How can I get to the “Ararat” restaurant?
Ուղիղ քայլեր մինչև խաչմերուկ: Հետո թեքվեք ձախ:	Ughigh k` aylek` minchev khachmeruk. Heto t` ek` vek` dzakh.	Walk straight till the intersection and then turn left.

New Words

փողոց	street	խաչմերուկ	intersection
հյուսիս	North	հարավ	South
արևելք	East	արևմուտք	West
աջ	right	ձախ	left
մուտք	enterence	հարկ	floor
թեքվել	turn	բարձրանալ	go up
մարզ	region	պողոտա	museum
օպերա	opera	շենք	building
հասնել	to reach to	թանգարան	museum

Վարժություններ / *Exercises*

1. Use one of the question words to complete the sentences.

- | | | | | |
|------------------------|------------------------|--------|------|------|
| քանի՞ | ո՞ր | որտե՞ղ | ու՞ր | ի՞նչ |
| 1. _____ է նրա անունը: | 4. _____ տարեկան է նա: | | | |
| 2. _____ է նա | 5. _____ ունի նա: | | | |
| աշխատում: | 6. _____ է քո տունը: | | | |
| 3. _____ ես գնում: | | | | |

2. Choose the right translation for the following question words.

- | | |
|-------------|---------------|
| 1. Որտե՞ղ | When? |
| 2. Ինչպե՞ս | What kind of? |
| 3. Ինչո՞ւ | Where? |
| 4. Ինչպիսի՞ | Why? |
| 5. Ե՞րբ | How? |
| 6. Որքա՞ն | How much? |

3. Choose the right pronoun and fill in the blanks.

- | | |
|--|------------|
| 1. Հասմիկն ուզում էր գնալ _____ տեղ պարելու: | 1. Ոչինչ |
| 2. _____ չի կարող ջղայնացնել ծերունուն: | 2. Մի քանի |
| 3. Ոստիկանները _____ փաստեր ունեն: | 3. Ամեն մի |
| 4. _____ գետ ունի սկիզբ ու վերջ: | 4. Ինչ-որ |
| 5. Զինվորներից _____ վախկոտ են: | 5. Որոշը |

4. Put the words in the right order to form grammatically correct sentences.

1. ես, սիրում, Դու տանձ:
2. է: մեծ, Հայաստանից, Վրաստանը,
3. ամիս, Քանի՞, աշխատելու: ես,
4. այս, պատրաստել, աթոռ: Ինչպե՞ս, ես,
5. գնել: են, Ո՞ր, խանութից, իրենց, կահույքը,
6. պետք է, Ինչքա՞ն, վճարեմ:

5. Translate the following sentences into Armenian.

1. Is that a tree or a statue?
2. Why are the plants green?
3. When are they going to be free?
4. How do you feel?
5. Do you have a headache or a toothache?
6. Which of these computers do you use?
7. When is Anna going to be here?
8. Do you like your coffee with sugar?
9. Why didn't you just ask me?
10. Where are you going to go next year?
11. What did you do two hours ago?
12. What are you thinking about?
13. What is your name? What is your sister's name?
14. What time is it?
15. When are you going to visit Bern?
16. Where do you go every summer?
17. Where do you take your children during weekends?
18. When is your birthday?
19. Lilit and Arus are old friends.
20. Hagop is my brother.

21. Armen and Siranush know each other.
22. Levon has a large family. He has four sisters and a brother.
23. I am very happy to meet you today.
24. Suren is afraid of everything.
25. All Armenians are proud of their language.
26. The teacher knows each of them by face.
27. The policeman asked the same question to each of them.
28. Narek's sister took the whole wine with her.
29. Someone is going to meet me at the airport.
30. My grandfather loves to look at the sea.
31. Where are you going?
32. Why did you go to store?
33. What kind of a person is she?
34. How did you find me in the museum?
35. Where is the "Old Yerevan" restaurant?
36. What is this?
37. How many cars does your uncle have?
38. Whose jacket is this?
39. Who was that person?
40. Who visits you every Sunday?

6. Choose the right word form the brackets and fill in the blanks.

1. _____ քնել է: (Արմեն, Արմենը, Արմենը է)
2. Հիմա ժամը _____ է: (չորսն, չորս, չորսին)
3. Լուսինեի _____ երկար են: (մազեր, մազերը, մազը)
4. Այսօր օգոստոսի _____ է: (տասնչորս, տասնչորսն, տասնչորսով)
5. Ես _____ նստել չեմ սիրում: (տաքսին, տաքսի, տաքսուն)

Դաս Քսաներկուերորդ

Verb Declension

When verbs in their infinitive form get a definite article, they become nouns. For example: լողալ - “to think” becomes լողալը “the act/activity of swimming”, ուտել - “to eat” becomes ուտելը - “the act/activity of eating”, մտածել - “to think” becomes մտածելը - “the act/activity of thinking” etc.

As with nouns and pronouns Armenian verbs can be declined in Armenian. Verbs change their meaning according to the case in which they are declined. Below is an example of the verb գնալ put into the seven different cases.

Nominative	գնալ	Ալանի գնալը խանգարեց մեր գործին: Alan’s departure(going) bothered our work.
Genitive	գնալու	Ժաննայի Փարիզ գնալու նպատակը ճամփորդելն էր: Zhanna’s reason for going to Paris was to travel.
Dative	գնալու(ն)	Պատրաստ չէինք Արմինեի գնալուն: We were not prepared for Armine’s departure (going).
Accusative	գնալ(ը)	Ես հիշում եմ Արմինեի գնալը: I remember Armine’s departure.
Ablative	գնալուց	Տնօրենի գնալուց հետո բոլորը սկսեցին պարել: After the director’s departure, everyone began to dance.
Instrumental	գնալով	Սփյուռքահայերը պարելով հայերեն են սովորում: Diasporans are learning Armenian while dancing.
Locative	գնալու մեջ	Ցույցի գնալու մեջ ոչ մի լավ բան չեմ տեսնում: I don’t see anything good in going to the demonstration.

Here are some sentences using declined verbs:

- 1) Լողալը լավ է առողջության համար:
Swimming is good for health.
- 2) Զինվորը հետևում էր ընկերոջ վազելուն:
The soldier was watching his friend running.
- 3) Մանկան լացելը երկար տևեց:
The child’s crying lasted a while.
- 4) Լենան շատ հոգնեց երգելուց և գնաց հանգստանալու:
Lena got very tired of singing and went to rest.
- 5) Թագավորի միակ որդուն փրկելով^a նա շատ ընկերներ գտավ:
He found many friends by saving the king's only son.

Verbs are often put into the genitive case and combined with prepositions like հետ - “with”, համար - “for”, մասին - “about” etc. to form adverbial phrases and other constructions.

1) Ես Մոսկվա գնացի Լեոնտևին հանդիպելու համար:

I went to Moscow to meet Leontev.

2) Աննայի գալու հետ կապված խնդիրը բարդ է:

The problem with Anna’s arrival is complicated.

3) Երեք ժամ աշխատելուց հետո նա գնաց:

She left after working for three hours.

DIALOGUE: ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ / CONGRATULATIONS

_Շնորհավոր ծնունդդ, Արմեն:	Shnorhavor tsundd Armen.	Happy birthday Armen.
_Շնորհակալ եմ:	Shnorhakal em.	Thanks!
_Քեզ մաղթում եմ երջանկություն և առողջություն:	K`ez maght`um em yerjankut`yun yev ar`oghjut`yun.	I wish you happiness and health!
_Մաղթում եմ երազանքների իրականացում:	Maght`um em yerazank`neri irakanats`um.	I wish you realization of dreams.
_Շատ շնորհակալություն:	Shat shnorhakalut`yun.	Thank you very much!
_Շնորհավորում եմ քո նոր տունը:	Shnorhavorum em k`o nor tuna`.	Congratulations for your new house.
_Ցանկանում եմ, որ երկար վայելես քո նոր տունը:	Ts`ankanum em, vor yerkar vayeles k`o nor tuna`.	May you enjoy your new house a long time.
_Թող նոր տունը հաջողությունների սկիզբ լինի:	T`ogh nor tuna` hajoghut`yunneri skizb lini.	May your new house bring successes.
_Շնորհավոր նոր աշխատանքդ:	Shnorhavor nor ashkhatank`d.	Congratulations for your new job.
_Հաջողություն եմ մաղթում:	Hajoghut`yun em maght`um.	I wish you good luck!
_Շատ ուրախ եմ քեզ համար:	Shat urakh em k`ez hamar.	I am very happy for you.
_Շատ մերսի:	Shat mersi.	Many thanks.
_Դու արժանի ես լավագույնին:	Du arzhani es lavaguynin.	You deserve the best.
_Շնորհավոր Նոր Տարին:	Shnorhavor Nor Tarin.	Happy New Year!
_Ես էլ քո Նոր Տարին եմ շնորհավորում: Ուրախ ու երջանիկ տարի թող լինի:	Yes el k`o Nor Tarin em shnorhavorum. Urakh u yerjanik tari t`ogh lini.	Happy New Year to you too. May it be a happy year!

_Ձեր բալիկը ծնվել է: Աչքներդ լույս: Բախտավոր բալիկ թող լինի:	Dzer balika tsnvel e. Achknerd luys. Bakhtavor balik togh lini.	Your baby was born. Congratulations. May she be lucky!
_Շնորհակալություն: Տարոսը ձեզ:	Shnorhakalutyun. Tarosa` dzez.	Thank you. May you have the same fate.

New Words

ծնունդ	birthday	երջանկություն	happyness
շնորհակալություն	thank you	երկար կյանք	long life
առողջություն	health	հաջողություն	good luck
ցանկանալ	to wish	մաղթել	to wish
արժանի լինել	deserve	իրականացում	realization
երազանք	dream	բախտավոր	lucky
առողջ	healthy	աչքդ լույս	Congratulations! (Literally “Light to your eyes!” wished when something very good happens)
վայելել	enjoy	թող	may ...
Նոր Տարի	New Year	բալիկ	baby
տարոսը քեզ/ձեզ	May you have the same fate!		

More common wishes/congratulations

երջանիկ լինես	May you be happy.
երկար կյանք ունենաս	May you have a long life
դժվարությունների չհանդիպես	May you never face difficulties
ծնողներիդ աչքի լույսը լինես	May you bring light to your parent’s eyes, may you bring good luck/joy to your parents
հաջողակ լինես	May you have good luck
անփորձանք լինես	May you stay away from misfortunes.

Վարժություններ / *Exercises*

1. Match the questions on the right with answers on the left.

- | | |
|--|--|
| 1. _Դու որտե՞ղ ես ապրում: | ա. _Իմ հասցեն հետևյալն է. ք. Արմավյան, Հատիս փողոց, շենք 5, բնակարան 12: |
| 2. _Որտե՞ղ է Արմավյան քաղաքը: | բ. _Ոչ, Երևանից հեռու չէ: |
| 3. _Խնդրում եմ, ասա քո տան հասցեն: | գ. _Ես ապրում եմ Արմավյան քաղաքում: |
| 4. _Շնորհակալություն: Մի օր անպայման կգամ քո տուն: | դ. _Արմավյան քաղաքը Երևանի հյուսիսում է: |
| 5. Արմավյանը ք. Երևանից հեռու՞ է: | ե. _Շատ ուրախ կլինեմ, եթե գաս: |

2. Translate the following sentences into English.

1. Քայլելն օգտակար է առողջության համար:
2. Սա քայլելու համար լավ ճանապարհ է:
3. Նա տանից դուրս եկավ քայլելու:
4. Նա սիրում է քայլել:
5. Նրանք քայլելով հեռացան:
6. Դուք քայլելուց հաճույք չեք ստանում:
7. Շատ քայլելու մեջ իմաստ չկա:
8. Ամաչելը ոչ մի բանի չի օգնում:
9. Ամաչելու ոչ մի առիթ չկա:
10. Նա սովորել է ամաչել:
11. Մենք ամաչելով խնդրեցինք մեզ օգնել:
12. Ամաչելուց բացի ուղղի՛ր քո սխալը:
13. Նա ամաչելու մեջ դրական բան է տեսնում:
14. Նա սիրում է գիլասի հյուր, բայց չի ուտում սմբուկ:
15. Միս ուտելը գիրացնում է մարդկանց:
16. Երեկ երեկոյան նրանց տուն երկու աղջիկ հյուր գնաց:
17. Դուք արդեն երկու ժամ և քսան րոպե սպասում եք բժշկին:
18. Իմ թոռնիկները շատ են սիրում մեր բակը:
19. Ամեն մի պետություն բանակ ունի:
20. Հայաստանում շատ են կարտոֆիլ ուտում:
21. Դուք ատում եք այս խանութը: Ինչու՞ նորից եկաք:
22. Իմ հարևանի հարսները գեղեցիկ են:
23. Նա շատ է ամաչում ուշանալու համար:
24. Զգուշացի՛ր ավտոմեքենայից:
25. Ցտեսություն Անահիտ: Կհանդիպենք հաջորդ ամռանը:

3. Translate the following sentences into Armenian.

1. Where were you born?
2. Why did you come to Armenia?
3. How do you feel?
4. What do you like to eat?
5. Who is your favorite actor?

6. Whose cigarettes are these?
7. Those are Armen's parents' cigarettes.
8. I am going to go to the sea with my parents next year.
9. In this picture my daughter is playing with her doll.
10. No one knows where your grandfather is.
11. Nothing is forbidden in this park.
12. When she was little, she did not respect anyone.
13. When you were younger, you loved cookies.
14. None of you have studied in Armenia.
15. There is not a single telephone in this house.

4. Convert the following sentences in future indicative to sentences in simple past. Make corresponding changes in the sentence if necessary.

1. Դու չե՞ս վայելելու քո արձակուրդը:
2. Վաղը մենք նրան մաղթելու ենք հաջողություն:
3. Նոր Տարվա օրը մենք խմելու ենք կոնյակ և ուտելու ենք տոլմա:
4. Նրանք չեն սովորելու հայերեն:
5. Հաջորդ տարի դուք իրար չեք հանդիպելու:
6. Նա բարձրանալու է Արարատ լեռը:
7. Մենք հասնելու ենք Կամչատկա:
8. Միշտ արևմուտք գնալով մենք հասնելու ենք Չինաստան:
9. Որքա՞ն ժամանակում ես ավարտելու այս աշխատանքը:
10. Քանի՞ անգամ ես գնալու Վրաստան:
11. Մի օր նա դառնալու է լավ իրավաբան:
12. Եկող շաբաթ ես ծանոթանալու եմ քո հոր հետ:
13. Վաղը դու դառնալու ես իմ մտերիմ ընկերը:
14. Մենք իրար միշտ հարգելու ենք:
15. Երկուշաբթի օրը դուք սափրելու եք ձեր մորուքները:

Դաս Քսաներեքերորդ

Participles

Armenian verbs are not only declined in different cases, but also form participles where they act as adjectives and adverbs in a sentence. There are eight participles in Armenian. When studying verb tenses we have covered some of them already. The chart below presents all participles.

There are three more participles we need to learn. These three participles are formed by removing the “-ել/-ալ” verb ending and adding “-ող/-ացող,” “-ած/-ացած,” and “-ելիս/-ալիս” to the stem. The chart below illustrates the name, formation and use of all participles.

Participle	Ending/Example	Its function in a sentence	Example in a phrase
Infinitive	Verb stem + -ել, OR -ալ վազել, խաղալ	Can function as subject or an object.	Նա սիրում է վազել: He likes to run. Խաղալը սխալ չէ: It is not wrong to play.
Subject participle	-ել verbs Verb stem +ող վազող ալ verbs Verb Stem +ացող խաղացող	Acts as an adjective Indicates what the noun is doing/undergoing.	վազող երեխա a child who is running խաղացող երեխա a child who is playing
Resultative participle	ել verbs Verb stem +ած հոգնած ալ verbs Verb stem +ացած խաղացած	Acts as an adjective Informs about the state of a noun or object (tired, angry, broken etc.)	Հոգնած մարդ A tired man Խաղացած խաղ A played game
Processual participle	ել verbs Verb stem +ելիս վազելիս ալ verbs Verb stem +ալիս խաղալիս	Acts as an adjective or an adverb and is used to denote simultaneous action	Վազելիս ընկավ While running he fell Խաղալիս սովորեց While playing he learned
Present participle	-ել verbs -ալ verbs Verb stem +ում Վազում, խաղում	This participle is used for forming present simple, continuous and past continuous.	Նա ամեն օր վազում է: He runs every day. Նա հիմա վազում է: He is running now. Նա վազում էր: He was running. /He used to run.

Perfect participle	ել verbs Verb stem +ել վազել ալ verbs Verb stem +ացել խաղացել	This participle is used for forming present perfect and past perfect.	Նա վազել է: He has run. Դու խաղացել էիր: You had played.
Future participle	ել verbs Verb stem +ելու վազելու ալ verbs Verb stem +ալու խաղալու	This participle is used for forming future tenses.	Վազելու եմ: I am going to run. Խաղալու ես: You are going to play.
Negative participle	ել verbs Verb stem +ի վազի ալ verbs Verb stem +ա խաղա	This participle is used for forming negative sentences in various tenses as well as for forming the subjunctive form of verbs.	Չեմ վազի: I will not run. Չի խաղա: She will not play.

Here are a few sentences using participles:

- 1) Սուրճ խմող մարդն իմ հայրն է:
The man who is drinking coffee is my father.
- 2) Լացող երեխան շատ գեղեցիկ է:
The child who is crying is very beautiful.
- 2) Հոգնած կինը նստեց աթոռին:
The tired woman sat on the chair.
- 3) Ես նրան տեսա գետի մոտով քայլելիս:
I saw him while walking along the river.
- 4) Ինձ հետևողը Վարդանի փոքր եղբայրն էր:
The person following me was Vardan's younger brother.
- 5) While driving my car you violated the law.
Իմ մեքենան վարելիս դու խախտեցիր օրենքը:
- 6) Դու տալիս ես իմ խնդրածը:
You give what I ask.
- 7) Նրանք երբեք չեն գա:
They will never come.
- 8) Ես չեմ ուտելու այս տոլման:
I am not going to eat this tolma.

**DIALOGUE: ՇՈՒԿԱՅՈՒՄ և ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ /
AT THE MARKET AND MONEY EXCHANGE**

_Խնձորն ի՞նչ արժե:	Khndzorn inch arzhe?	How much does the apple cost?
_Սա 550 դրամ, իսկ սա՝ 430:	Sa 550 dram, isk sa 430.	Those are 550 AMD, and those are 430.
_Իսկ եթե հինգ կիլոգրամ վերցնե՞մ:	Isk yete hing kilogram verts`nem?	And what if I take 5 kilos?
_2500 դրամ տուր և հինգ կիլոգրամ տար:	Yerku hazar hing haryur tur yev hing kilogram tar.	Give 2500 and take 5 kilos.
_2000 -ով չես տա՞:	Yerku hazarov ches ta?	Won't you give for 2000?
_Ոչ:	Voch.	No.
_Լավ, հինգ կիլոգրամ կշռի՞ր:	Lav, hing kilogram kshr`ir.	OK. Weigh 5 kilos.
_Կարո՞ղ եմ կապույտ զգեստը վերցնել:	Karogh em kapuyt zgesta`verts`nel?	May I take the blue dress?
_Իհարկե, վերցրեք:	Iharke, verts`rek`.	Of course. Take it.
_Ի՞նչ արժե այս զգեստը:	Inch arzhe ays zgesta`?	How much does this dress cost?
_Զգեստն արժե 21500 դրամ:	Zgestn arzhe k`sanmek hazar hing haryur dram.	The dress costs 21500 AMD.
_Ավելի փոքր չափս չունե՞ք:	Aveli p`ok`r chap`s chunek`?	Don't you have a smaller size?
_Ունենք, բայց փոքր չափսը դեղին է:	Unenk`, bayts` p`ok`r chap`sa deghin e.	We have, but the smaller size is yellow.
_Կարո՞ղ եմ փորձել:	Karogh em p`ordzel?	May I try on?
_Իհարկե: Հանդերձասրահն այնտեղ է:	Iharke. Handerdzasrahn aystegh e.	Of course. The fitting room is here.
_Ճիշտ ձեր վրայով է:	Tshisht dzer vrayov e.	It is exactly your size.
_Ձեզ շատ է սազում:	Dzez shat e sazum.	It suits you very well.
_Սա ձեզ մեծ է: Ձեզ փոքր չափսն է պետք:	Sa dzez mets e. Dzez p`ok`r chapsn e petk`.	This is too big for you. You need a smaller size.
_Սա ձեզ չի սազում:	Sa dzez chi sazum.	This does not suit you.
_Սա ձեզ փոքր է: Ձեզ մեծ չափսն է պետք:	Sa dzez p`ok`r e. Dzez mets chap`sn e petk`.	This is too small for you. You need a larger size.
_Ցանկանում եմ վերադարձնել իմ զգեստը:	Ts`ankanum em veradardznel zgesta`.	I want to return the dress.
_Կարո՞ղ եմ դոլարով վճարել:	Karogh em dolarov vtsharel?	Can I pay in dollars?

– Ոչ: Ընդունում ենք միայն ՀՀ դրամ:	Voch. A`ndunum enk` miayn HH dram.	No, we accept only AMD.
– Որտե՞ղ կարող եմ գումար փոխել:	Vortegh karogh em gumar p`okhel?	Where can I exchange money?
– Կարո՞ղ եմ 200 դոլար փոխել:	Karogh em yerku haryur dolar p`okhel?	Can I exchange 200 dollars?
– Այո: Տվե՛ք ձեր անձնագիրը:	Ayo. Tvek` dzer andznagira`.	Yes. Give me your passport.
– Վերցրե՛ք ձեր մանրը:	Verts`rek` dzer manra`.	Take your change.
– Վերցրե՛ք ձեր գումարը:	Verts`rek dzer gumara`.	Take your money.
– Վերցրե՛ք ստացականը:	Verts`rek stats`akana`.	Take the receipt.

New Words

Ի՞նչ արժե ...	How much does ... cost?	սազել	to suit, to fit well
կշռել	to weigh	զգեստ	dress
չափս	size	փոխանակել	exchange
փորձել	to try on, to try	մանր	change
հանդերձարահ	fitting room	վերադարձնել	to return
վճարել	to pay	ընդունել	to accept
ստացական	receipt	անձնագիր	passport

Վարժություններ / *Exercises*

1. Translate sentences into English.
1. Տե՛ս այստեղ եկող մեքենան:
2. Մեքենայից տուփ վերցնող աղջիկն իմ քույրն է:
3. Ծառ տնկող երեխաները մեր գյուղից են:
4. Այստեղից արագ հեռացող մարդը քո հարկանն է:
5. Մենք կարոտում ենք մեր այցելած վայրերը:
6. Ես կրկնում եմ իմ մոռացած բառերը:
7. Դու կարող ես անել ցանկացած աշխատանք:
8. Գնա՛, դու խմած ես:
9. Չարենցավան գնալիս, ես հանդիպեցի Հովհաննեսին:

10. Չարենցավանից գալիս, դու հանդիպեցիր Արսենին:
11. Հեռուստացույց նայելիս հիշեցի քեզ:
12. Ձեր հարցին պատասխանելիս նա ամաչեց:
13. Ամեն օր աշխատող մարդն աշխատասեր է:
14. Ծառի տակ պառկած երեխաները բասկետբոլիստներ են:
15. Հայաստանն ունի հաղթած բանակ:
16. Ինձ փրկելով՝ դու ինձ երկրորդ կյանք տվեցիր:
17. Քեզ հետ ապրելու համար ես ամեն ինչ պատրաստ եմ անել:
18. Կապան գալու մեջ ոչ մի դժվար բան չկա:
19. Ջութակ նվագելու մեջ ոչ մի դժվար բան չկա:
20. Հինգ տարի Վանաձորում ապրելուց հետո նա եկավ Գյումրի:
21. Լավ մտածիր նախքան բանկից վարկ վերցնելը:
22. Աշխատանքի դիմելուց հետո մենք գնացինք այգի:
23. Ջութակ նվագելու փոխարեն նա երգում է:
24. Դու երբեք չես գտնի հարյուր հազար դոլար:
25. Երեխային մի ստիպիր սենյակը մաքրել:
26. Մատը լպստողը չորս տարեկան է:
27. Մեղր վաճառողը քո հորեղբայրն է:
28. Ձեռքերը լվացողը բժիշկ չէ:
29. Այս կոշիկը քեզ շատ է սազում:
30. Տարուսը քեզ, Արման ջան:

2. Finish the sentences.

1. Բանկում դրամ փոխելիս ես _____
2. Քո գնած խնձորը նրանք _____
3. Նրանք չեն կարողալու _____
4. Ոչ մեկը չի ուզում _____
5. Ընկերոջ գաղտնիքը պատմելը _____

3. Translate the following sentences into Armenian.

1. Armen knew the approaching man.
2. I hate cooking pizza.
3. Vahan hurt his hands while washing the car.
4. The dog was afraid of his old master.
5. We are going to replace the broken bowl.
6. Think well before refusing my offer.
7. When refusing your offer, I thought of my father.
8. While crossing the street you were singing.
9. The person who had approached the table, did not eat anything.
10. People approaching the forest are from our city.
11. The theorem that you explained, was very interesting.
12. I forgot the music that you played.
13. Children who are proud of their parents succeed in life.
14. Women who were shivering from cold have no coats.
15. Can anyone explain me what is happening here?

4. Form subject, resultative and processual participles of the following verbs and then form sentences using participles.

1. Ծխել, 2. պառկել, 3. ժպտալ, 4. երևալ, 5. դատել, 6. գոռալ:

5. Convert the following sentences in simple past into imperative (plural) sentences. Make corresponding changes in sentences when necessary.

1. Դու չփորձեցիր կոշիկը:
2. Նրանք ամեն ինչի համար վճարեցին:
3. Մենք վերադարձրեցինք քո անձնագիրը:
4. Ապրիլին ամեն օր ես աշխատեցի:
5. Հոկտեմբերին ամեն չորեքշաբթի նա հյուրեր ընդունեց:
6. Նա բոլորին իր սեփական արշինով չափեց:
7. Տատիկը ծիծաղեց:
8. Նրանք կերան ողջ գիլասը:
9. Նրանք չգնացին Մաշտոցի պողոտա:
10. Ժամը տասն անց քսան նրանք սկսեցին երգել:
11. Մի ամբողջ օր նա բարձր խոսեց:
12. Փետրվարի վեցին դուք այցելեցիք բժշկին:
13. Նրանք եղան Մոսկվայում և Թեհրանում:
14. Համերգի ժամանակ ես նրան ծաղրեցի:
15. Նա նորից ոչ մեկի առաջ վիզ չծռեց:

Դաս Քսանչորսերորդ

The Present Perfect Tense

The present perfect tense is used to indicate action which was completed in the past, but which is connected to the moment of speech. The meaning and function of present perfect in Armenian is similar to that in English.

- 1) Ես իմ գործն ավարտել եմ:
I have finished my work.
- 2) Նրանք երբևէ Մոսկվայում չեն եղել:
They have never been to Moscow.

The tense is formed by perfect participle and present auxiliaries.

Present Perfect					
-ել Verbs			-ալ Verbs		
	եմ	ենք		եմ	ենք
Verb stem +ել+	ես	եք	Verb stem+ացել +	ես	եք
	ե	ենք		ե	ենք

Here are 2 examples.

գրել		կարդալ	
ես գրել եմ	մենք գրել ենք	ես կարդացել եմ	մենք կարդացել ենք
դու գրել ես	դուք գրել եք	դու կարդացել ես	դուք կարդացել եք
նա գրել է	նրանք գրել են	նա կարդացել է	նրանք կարդացել են

The present perfect is often used in sentences with temporal adverbs like: արդեն -“already”, դեռ - “yet”, դեռևս - “yet”, “still”, երբևէ - “ever”, and երբեք “never.”

- 1) Նա երբեք ձուկ չի կերել:
He has never eaten fish.
- 2) Ես այդ գիրքն արդեն կարդացել եմ:
I have already read that book.
- 3) Ես այդ գիրքն արդեն կարդացել օր եմ:
Have I already read that book?

The Past Perfect Tense

The past perfect is used to express action which was completed before another action or time in the past. It is almost equivalent to the English past perfect tense.

- 1) Մեր հանդիպելուց առաջ ես արդեն վերջացրել էի իմ աշխատանքը:
I had already finished my work before our meeting.
- 2) Երբ դու եկար, նա արդեն վաճառել էր իր մեքենան:
When you came, she had already sold her car.

The past perfect is formed by perfect participle and past tense forms of the auxiliary verbs.

Past Perfect					
-ել Verbs			-ալ Verbs		
Infinitive +	էի	էինք	Verb stem+ացել +	էի	էինք
	էիր	էիք		էիր	էիք
	էր	էին		էր	էին

Here are examples:

գրել		կարդալ	
ես գրել էի	մենք գրել էինք	ես կարդացել էի	մենք կարդացել էինք
դու գրել էիր	դուք գրել էիք	դու կարդացել էիր	դուք կարդացել էիք
նա գրել էր	նրանք գրել էին	նա կարդացել էր	նրանք կարդացել էին

DIALOGUE: ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ / JOB INTERVIEW AND SKILLS

_Բարև ձեզ: Դուք դիմել եք կառավարչի թափուր հաստիքի համար:	Barev dzez. Duk` dimel ek` kar`avarchi t`ap`ur hastik`i hamar.	Hello. You have applied for the vacant position of the manager.
_Այո: Ես ունեմ փորձ:	Ayo, yes p`ordz unem.	Yes, I have experience.
_Ես ունեմ համապատասխան կրթություն:	Yes unem hamapataskhan krt`ut`yun.	I have corresponding education.
_Ես հինգ տարի աշխատել եմ որպես կառավարիչ:	Yes hing tari ashkhatel em vorpes kar`avarich.	I have worked as a manager for five years.

_Ես երկու տարի աշխատել եմ որպես ծրագրավորող:	Yes yerku tari ashkhatel em vorpes tsragavorogh.	I have worked as a programmer for two years.
_Ես համապատասխան փորձ չունեմ, բայց պատրաստ եմ սովորել:	Yes hamapataskhan p`ordz chunem, bayts` patrast em sovorel.	I do not have corresponding education, but I am ready to learn.
_Ուրիշ ի՞նչ հմտություններ ունեք:	Urish inch hmtut`yunner unek`.	What other skills do you have?
_Ես լավ կազմակերպիչ եմ:	Yes lav kazmakerpich em.	I am a good organizer.
_Ես ճշտապահ եմ:	Yes tshshtapah em.	I am punctual.
_Ես լավ եմ բանակցում:	Yes lav em banaktsum.	I negotiate well.
_Ես տիրապետում եմ լեզուների:	Yes tirapetum em lezuner.	I know languages.
_Ես գիտեմ համակարգչային ծրագրեր:	Yes gitem hamakargchayin tsragrer.	I know computer programs.
Որքա՞ն է աշխատավարձը:	Vork`an e ashkhatavardza`?	How much is the salary?
_Աշխատավարձը բավարար չէ:	Ashkhatavardza` bavarar che.	The salary is not satisfactory/enough.
_Գոհ եմ աշխատավարձից:	Goh em ashkhatavardzits`.	I am satisfied with the salary.
_Աշխատանքային ժամերը հարմար են:	Ashkhatankayin zhamera` harmar en.	Working ours are convenient.

New Words

դիմել	apply for	պատրաստ	ready
կառավարիչ	manager	հմտություն	skill
թափուր	vacant	կազմակերպիչ	organizer, one who organizes
հաստիք	position	ճշտապահ	punctual
փորձ	experience	բանակցել	to negotiate

համապատասխան	corresponding	տիրապետել	to master, to rule
կրթություն	education	համակարգչային	of or relating to a computer
որպես	as	ծրագիր	program
ծրագրավորող	programmer	աշխատավարձ	salary
զոհ	to be satisfied	հարմար	convenient

Վարժություններ / *Exercises*

1. Change the tense from simple past to present perfect. Get rid of certain adverbs of time if necessary.
 1. Նա երեկ տնկեց չորս ծառ, ջրեց այդ ծառերը և գնաց հանգստանալու:
 2. Այսօր ես շատ աշխատեցի և հոգնեցի:
 3. Անցյալ անգամ դու մոռացար ինձ տալ քո հեռախոսը:
 4. Նրանք մոտեցան ձեր մեքենային և նկարեցին այն:
 5. Ոստիկանը շատ ջղայնացավ տղայի վրա: Նա գոռաց տղայի վրա:
 6. Երբ Իտալիայում էի, ես եղա Հռոմում:
 7. Երեկ առաջին անգամ գինի խմեցի:
 8. Անցյալ շաբաթ դուք այցելեցիք Էջմիածին, եղաք Գառնիում, տեսաք Տաթևի վանքը, կերաք հայկական ուտեստներ:
 9. Նա չցանկացավ տեսնել քեզ:
 10. Վարդանը վերջապես նամակ գրեց իր մորը:
 11. 1988 թվականի դեկտեմբերի 8-ին Սպիտակ քաղաքում ուժգին երկրաշաժ տեղի ունեցավ:
 12. Հայաստանն անկախացավ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին:
 13. Վերջապես նրանք հեռացան այստեղից:
 14. Մենք ե՞րբ հասանք քաղաքի կենտրոն:
 15. Նրանք անցյալ տարի գնացին Ֆրանսիա և չվերադարձան:
2. Translate the following sentences into English.
 1. Կահույքը 25 դուլարով վաճառելը շահավետ է:
 2. Բանակում երգելը պարտադիր է:
 3. Վիճելը ոչ մեկին օգուտ չի տա:
 4. Իմ կարծիքով ներելն ամենադժվար բանն է աշխարհում:
 5. Գործը սկսելուց առաջ հարցրու :
 6. Դասերդ ավարտելուց հետո զանգի՛ր ինձ:
 7. Քո հասցեն հիշելու համար ես այն տասն անգամ կրկնեցի:
 8. Վատ մարդկանց մոռանալով մենք ազատվում ենք նրանցից:

9. Հին ձեռագրեր տեսնելու համար գնա Մատենադարան:
10. Շանը մոտենալու մեջ ոչ մի սարսափելի բան չկա:
11. Գործարար դառնալը ձեր երազանքն է:
12. Առողջանալուց առաջ նա ցանկանում էր նոր տուն գնել:
13. Դուք եղնիկին գետից հանեցիք և փրկեցիք նրան:
14. Հովհաննես Թումանյանը ծնվել է Դսեղ գյուղում 1869 թվին:
15. Գոհարիկը նկարելուց առաջ գիրք էր կարդում:
16. Անին միշտ կատակում է:
17. Ոստիկանը ոչիչնչ չպատմեց մեզ: Նա միայն նկարեց մեր տունը և լուռ հեռացավ:
18. Չի կարելի խաբել մայրիկին և հայրիկին: Չի կարելի վաճառել ուրիշի մեքենան:
19. Մի՛ գնա: Նստի՛ր արթոն և սկսիր պատմել ամեն ինչ:
20. Վարդանը երբեք չի ապրել Թուրքիայում:
21. Հայաստանի ատոմակայանը կառուցվել է քսաներորդ դարի յոթանասունականներին:
22. Երևանի մետրոպոլիտենը սկսել է գործել հազար ինը հարյուր ութսունականներին:
23. Երևանի Մատենադարանի շենքը կառուցվել է քսաներորդ դարի հիսունականներին:
24. Լևոն Տեր-Պետրոսյանն իշխել է հազար ինը հարյուր իննսունականներին:
25. Հազար ինը հարյուր իննսունականներին Հայաստանը ծանր տնտեսական վիճակում էր:

3. Translate following sentences into Armenian.

1. They have come from North.
2. When you came, she had gone already.
3. Have you been to Ijevan?
4. Who has brought these cherries?
5. You have never eaten borsh.
6. I have never climbed Mt. Ararat.
7. When I came, you had already bought sandwiches.
8. The doctor had told me her name.
9. They have never read Charents's books.
10. Have you ever heard about Paruyr Sevak?
11. You have already walked through Tsitsernakaberd park.
12. I have painted your car.
13. Nobody has asked me for help.
14. Everyone in this room has been to India.
15. They have always avoided my questions.

The Future Perfect Tense

- Page 163 of 230

The negatives of future perfect tense is formed by the negative form of the verb լինել - “to be” in future conditional mood.

The negative of the verb լինել - “to be” in the future conditional.

ես չեմ լինի - I will be	մենք չենք լինի - we will be
դու չես լինի - you will be	դուք չեք լինի - you will be
նա չի լինի - s/he will be	նրանք չեն լինի - they will be

Below the negative conjugation of two verbs in future perfect tense are presented.

ավարտել		մոտենալ	
ավարտած չեմ լինի	ավարտած չենք լինի	մոտեցած չեմ լինի	մոտեցած չենք լինի
արվատած չես լինի	ավարտած չեք լինի	մոտեցած չես լինի	մոտեցած չեք լինի
ավարտած չի լինի	ավարտած չեն լինի	մոտեցած չի լինի	մոտեցած չեն լինի

Here are two negative sentences in future perfect:

- 1) 2025 թվականին մենք Աշոտին մոռացած չենք լինի:
We will not have forgotten Ashot in 2025.
- 2) 2020 թվականի աշնանը նրանք գործն ավարտած չեն լինի:
In fall 2020 they will not have finished the work.

Above we learnt that certain verbs have irregular simple past and imperative forms. These same verbs have irregular forms in perfect participles. Their form in perfect participle is similar to their forms in simple past and in imperative mood. The table below presents a partial list of verbs with irregular participles.

Infinitive	Perfect Participle		Infinitive	Perfect Participle
գտնել	գտած		տանել	տարած
տեսնել	տեսած		վերցնել	վերցրած
ստանալ	ստացած		գալ	եկած
գիտենալ	գիտեցած		ուտել	կերած
իմանալ	իմացած		լինել	եղած

Here are two sentences using perfect participles of irregular verbs.

1) Երկու ժամից ես արդեն կերած կլինեմ:

In two hours I will have eaten already.

2) Դուք վաղը եկած չեք լինի:

You will not have come (arrived) tomorrow.

DIALOGUE: ՌԵՍՏՈՐԱՆՈՒՄ / AT A RESTAURANT

_Բարև ձեզ: Ահա մենյուն:	Barev dzez. Aha menyun.	Hi! Here is the menu.
_Շնորհակալություն: Բայց անգլերեն մենյու ունե՞ք:	Shnorhakalut`yun. Bayts` angleren menyu unek`?	Thank you! But do you have a menu in English?
_Ահա անգլերեն մենյուն:	Aha angleren menyun.	Here is the menu in English.
_Ես մի քանի րոպեից կմոտենամ:	Yes mi k`ani ropeits` kmotenam.	I will come to you in a few minutes.
_Մենք հիմա կարող են պատվիրել:	Menk` hima karogh enk` patvirel.	We can order now.
_Լսում եմ Ձեզ:	Lsum em dzez.	I am listening.
_Մենք ուզում ենք, խորոված, թարմ բանջարեղենով սալաթ, պանիր և լավաշ:	Menk` uzum enk` khorovats, t`arm banjareghenov salat`, panir yev lavash.	We want barbecue, fresh vegetable salad, cheese and flatbread.
_Խորովածը պատրաստ կլինի 25 րոպեից:	Khorovatsa` patrast klini k`sanhing ropeits`.	The barbecue will be ready in 25 minutes.
_Շատ լավ է: Բերեք:	Shat lav e. Berek`.	Very well. Bring it when ready.
_Ի՞նչ կցանկանաք խմել:	Inch kts`ankanak` khmel?	What would you like to drink?
_Հայկական կոնյակ, մեկ շիշ գարեջուր, մեկ բաժակ կարմիր գինի և ծիրախ հյութ:	Haykakan konyak, mek shish garejur, mek bazhak karmir gini yev tsirani hyut`.	Armenian brandy, a bottle of beer, a cup of red wine and apricot juice.
_Ներեցեք, բայց այսօր ծիրախի հյութ չունենք:	Nerets`ek`, bayts` aysor tsirani hyut` chunenk`.	Sorry, but we do not have apricot juice today.
_Ի՞նչի հյութ ունեք:	Inch hyut` unek`?	What juices do you have?

– Ունենք բանանի, դեղձի և խնձորի հյութ:	Unenk` banani, degdizi yev khndzori hyut`.	We have banana juice, peach juice and apple juice.
– Այդ դեպքում բերեք 2 շիշ հանքային ջուր:	Ayd depk`um berek yerku shish hank`ayin jur.	In that case bring 2 bottles of mineral water.
– Ինչպիսի՞ զաքեջուր եք ցանկանում: Մենք ունենք «Կիլիկիա» և «Կոտայք»:	Inchpisi garejur ek` ts`ankanum. Menk` unenk` “Kilikia” yev “Kotayk`.”	What kind of beer would you like. We have “Kilikia” and “Kotayk.”
– Բերեք Կիլիկիա:	Berek` “Kilikia.”	Bring “Kilikia.”
– Վե՞րջ:	Verj?	Is this all?
– Այո, շնորհակալություն	Ayo. Shnorhakalutyun.	Yes. Thank you!

New Words

մենյու	menu	կոնյակ	brandy
պատվիրել	to order	գինի	wine
խորոված	barbaque	զաքեջուր	beer
թարմ	fresh	հյութ	juice
բանջարեղեն	vegetable	հանքային ջուր	mineral water
սալարթ	salad	շիշ	bottle
պանիր	cheese	բաժակ	cup
լավաշ	lavash, flatbread	այդ դեպքում	in that case

Վարժություններ / *Exercises*

1. Choose the right verb from the brackets and fill in the blanks.

1. Մենք արդեն _____ տուն, երբ սկսեց անձրև գալ: (հասել էինք, հասած էինք, հասանք)
2. Փողուցում Արսենը տեսավ իր ընկերոջը, որին շատ վաղուց _____ և սկզբում չճանաչեց: (չէր հանդիպել, չհանդիպեց, չի հանդիպի)
3. Ես _____ Հայաստան մի շաբաթ առաջ: (եկել եմ, եկած կլինեմ, գալու եմ)
4. Երբ ես եկա, մայրս ասաց, որ հյուրերն արդեն _____: (գնացած են, գնացել են, գնացին)

5. Վաղը երեկոյան ես չեմ կարող քեզ հյուր գալ, քանի որ այդ ժամին ես շատ _____: (հոգնել եմ, հոգնեցի, հոգնած կլինեմ)
6. Երբ դու գաս, ես արդեն _____: (քնել եմ, քնած կլինեմ, քնելու եմ)
7. Նրանք իտալերեն _____ չորս տարի առաջ: (սովորել են, սովորելու են, սովորած կլինեն)
8. Այժմ Հայաստանում բժիշկները բարձր աշխատավարձ _____: (չէին ստանում, ստանալու են, չեն ստանում)
9. Դարեր առաջ թուրքերն այստեղ _____ Միջին Ասիայից: (են գալիս, են եկել, եկած կլինեն)
10. Նա վաղը _____ այգի: (եկե՞լ էր, գալու՞ են, գալու՞ է:)
11. Ես անցյալ շաբաթ _____ այդ մարդկանց: (սպասած կլինեմ, չեմ սպասելու, չէի սպասում)
12. Հաջորդ կիրակի օրը ռեստորանում մենք _____ համեղ ձուկ և գինի: (պավիրեցինք, պատվիրում ենք, պատվիրելու ենք)
13. Ինչ-որ մեկը երեկ _____ մեր վարագույրը: (կտրելու է, չի կտրելու, կտրել է)
14. Նա հիմա էլ _____ բարձրանալ լեռները: (սիրում էր, չի սիրում, չէր սիրում)
15. Երբ դու վերադարձար ԱՄՆ-ից, ես արդեն _____ իմ մեքենան: (վաճառել էի, վաճառելու եմ, վաճառում եմ)

2. Change the following sentences into the past perfect. Add adverts of time if necessary.

1. Ես սովորել եմ իմ դասը:
2. Իմ քույրն արդեն առողջացել է:
3. Քամին դադարել է:
4. Մենք միասին ենք ընթրել:
5. Նա լվացել է իր հեծանիվը:
6. Դու չես ուղղել քո սխալները:
7. Նրանք միշտ էլ արժանի են եղել խիստ պատժի:
8. Ձեզանից յուրաքանչյուրն ինձ օգնել է:

3. Make the following sentences affirmative.

1. Ես չեմ պատրաստվել մրցելու համար:
2. Մենք գիտնականներ չենք:
3. Ես չեմ դարձել լրագրող:
4. Նրանք ուստիկաններին չեն սիրում:
5. Շունը չէր թողել իր ձագերին:

4. Translate the following sentences into English.

1. Ես արդեն իջել եմ ինքնաթիռից:
2. Ես արդեն իջել էի ինքնաթիռից:
3. Ես արդեն իջած կլինեմ ինքնաթիռից:
4. Նրանք դեռ չեն հաշվել այս քաղաքի արձանները:

5. Նրանք դեռ չէին հաշվել այս քաղաքի արձանները:
6. Նրանք դեռ հաշված չեն լինի այս քաղաքի արձանները:
7. Դու երեկ մասնակցե՞լ ես համերգին:
8. Դու երեկ մասնակցե՞լ էիր համերգին:
9. Դու վաղը համերգին մասնակցած կլինե՞ս:
10. Դուք երեկ չե՞ք գնացել խանութ:
11. Դուք երեկ արդեն չէի՞ք գնացել խանութ:
12. Դուք վաղը խանութ գնացած չե՞ք լինի:

5. Form the present perfect tenses of the following verbs, and use them in sentences.

1. Բաժանել, 2. գցել, 3. դնել, 4. եռալ:

6. Form the past perfect tense of the following verbs and use them in sentences.

1. Ջանգել, 2. ընդգծել, 3. թաղել, 4. իջնել:

7. Form the ‘future perfect’ tense of the following verbs and use them in sentences.

1. Լսել, 2. խաբել, 3. վաճառել:

Դաս Քսանվեցերորդ

Subjunctive Mood

The subjunctive mood is used for expressing desires. The subjunctive mood has two tenses: future and past.

Future Subjunctive

The future subjunctive is formed by adding the endings below to the infinitive verb stem.

-ել Verbs			-ալ Verbs		
	եմ	ենք		ամ	անք
Verb Stem +	եւ	եք	Verb Stem +	աս	աք
	ի	են		ա	ան

Here are two affirmative verbs conjugated in future subjunctive.

հանդիպել - to meet		հասկանալ- to understand	
հանդիպեմ	հանդիպենք	հասկանամ	հասկանանք
հանդիպես	հանդիպեք	հասկանաս	հասկանաք
հանդիպի	հանդիպեն	հասկանա	հասկանան

The future subjunctive is used to indicate a wish or desire about the future. Often the word երանի - “if only”, or թող - “let”, “may” are used and placed in front of the verb. The word երանի often gets the exclamation mark “’”. The word թող does not get the exclamation mark. The exclamation mark is placed on the last vowel of the word. In oral speech the words having the exclamation mark are prolonged.

1) Երանի վաղը հանդիպեմ Թոմին:

If only I could meet Tom tomorrow.

2) Թող բոլոր երեխաները երջանիկ լինեն:

Let all children be happy.

The word թող is used only with future subjunctive.

Verbs in future subjunctive form are also used in clauses of condition and after conjunctions like: եթե - “if”, թե- “if/or”, որ - “in order to”, and որպեսզի - “so that”.

1) Եթե լավ սովորես, բարձր գնահատականներ կստանաս:

If you study well, you will receive high grades.

- 2) Դանդաղ ասա, որպեսզի հասկանամ:
Say it slowly so I understand.
- 3) Գնում եմ խանութ, որ հաց գնեմ:
I am going to the store to buy bread.
- 4) Նա ուզում է, որ նրանք շուտ որոշեն:
He wants them to decide quickly.

Past Subjunctive

The past subjunctive is used to express an unfulfilled desire of someone having done something or something being the case in present or in the past. The past subjunctive is formed by adding the endings below to the verb stem.

-ել Verbs			-ալ Verbs		
	եի	եինք		այի	այինք
Verb Stem +	եիր	եիրք	Verb Stem +	այիր	այիրք
	եր	երինք		ար	արին

Below the conjugations of verbs հանդիպել - “to meet”, and հասկանալ - “to understand” are given.

հանդիպել – to meet		հասկանալ- to understand	
հանդիպեի	հանդիպեինք	հասկանայի	հասկանայինք
հանդիպեիր	հանդիպեիրք	հասկանայիր	հասկանայիրք
հանդիպեր	հանդիպերին	հասկանար	հասկանարին

Here are examples of uses of the past subjunctive.

- 1) Երանի՛ք երեկ կարողանայի Արմինեի հետ այդ մասին զրուցել:
If only I were able to talk about that to Armine yesterday.
- 2) Երանի՛ք հիմա կարողանայի Արմինեի հետ այդ մասին զրուցել:
If only I were able to talk about that to Armine now.
- 3) Նա ցանկանում էր, որ ես հասկանայի իրեն:
He wanted me to understand him.
- 4) Եթե ավելի լավ սովորեիր, ավելի շատ կիմանայիր:
If you studied better you would know more.

The negative form of both future and past subjunctive tenses are formed simply by adding the letter “չ” to the affirmative subjunctive:

չ + Future Subjunctive		չ + Past Subjunctive	
չտեսնեմ	չտեսնենք	չտեսնեի	չտեսնեինք
			ք

չտեսնես	չտեսնեք	չտեսնեիր	չտեսնեիք
չտեսնի	չտեսնենք	չտեսներ	չտեսնեին

1) Նա գնաց տաքսիով, որպեսզի չուշանա:

He went with a taxi so that he would not be late.

2) Ծնողներն ուզում էին, որ իրենց երեխաները դժվարություններ չտեսնեն:

The parents wanted their children not to see difficulties.

DIALOGUE: ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ / HOUSEWORK

_Դու աշխատո՞ւմ ես շաբաթ օրերին:	Du ashkhatum es shabat`orerin?	Do you work on Saturdays?
_Ոչ: Շաբաթ և կիրակի օրերին ես չեմ աշխատում:	Voch. Shabat yev kiraki orerin yes chem ashkhatum.	No. I do not work on weekends.
_Ի՞նչ ես անելու այս շաբաթ օրը:	Inch es anelu ays shabat`ora`?	What are you going to do on this Saturday?
_Շաբաթ օրը տնային աշխատանքներ եմ կատարելու:	Shabat` ora` tnayin ashkhatank`ner em katareru.	I will do housework on Saturday.
_Ի՞նչ ես անելու:	Inch es anelu?	What are you going to do?
_Ես լվանալու եմ լուսամուտները:	Yes lvanalu em lusamutnera`.	I am going to wash the windows.
_Ես ավելելու եմ հատակը:	Yes avlelu em hataka`.	I am going to sweep the floor.
_Ես դասավորելու եմ իմ պահարանը:	Yes dasavorelu em im paharana`.	I am going to organize my shelf/wardrobe.
_Ես աղբն եմ թափելու:	Yes aghbn em t`ap`elu.	I am going to throw away the trash.
_Ես ճաշ եմ եփելու:	Yes tshash em yep`elu.	I am going to cook a meal.
_Ես տորթ և գաթա եմ թխելու:	Yes tort` yev gat`a em t`khelu.	I am going to bake a cake and gata.
_Ես իմ երեխաներին եմ խնամելու:	Yes im yerekhanerin em khnamelu.	I am going to take care of my children.
_Ես լվանալու եմ իմ շորերը:	Yes lvanalu em im shorera`.	I am going to wash my clothes.

_Ես հարթուկելու եմ իմ շապիկները:	Yes hartukelu em im shapiknera`.	I am going to iron my shirts.
_Ես հեռուստացույց եմ դիտելու:	Yes her`ustatsuyts` em ditelu.	I am going to watch TV.
_Ես հյուրեր եմ ունենալու:	Yes hyurer em unenalu.	I am going to have guests.

New Words

տնային աշխատանք	1) house work, 2) homework	ճաշ	meal
կատարել	to do, to implement	եփել	to cook
լուսամուտ	window	տորթ	cake
ավլել	to sweep	թխել	to bake
հատակ	floor	խնամել	to take care of
դասավորել	to organize	հարթուկել	to iron
պահարան	shelf, wardrobe	շապիկ	shirt
աղբ	trash	հեռուստացույց	TV
թափել	to spill, to throw away	դիտել	to watch

Վարժություններ / *Exercises*

1. Translate the following sentences into English.

- Երանի բոլոր մարդիկ լինեին բարի և ուժեղ:
- Երանի պատերազմներ այլևս չլինեն:
- Երանի մենք բոլորս էլ սիրենք մեր հայրենիքը:
- Երանի ես Սարգիսի պես երիտասարդ և խելացի լինեի:
- Երկու տարի առաջ մենք դեղեր էինք բերել, որպեսզի հիվանդներին օգնեինք:
- Ուզում եմ, որ հասկանաս, որ քեզ սիրում եմ:
- Երանի նա մոռանա իմ արածը:
- Երանի նրան երբեք չմոտենայի:
- Ուզում ես, որ նա քեզ հավատա:
- Մենք չենք ուզում, որ նա խոսի քեզ հետ:
- Նա ասաց, որ ես իր շապիկը հագնեմ:
- Դու չես ուզում, որ նա հեռուստացույց դիտի:

13. Նրանք ուզում են, որ դու շապիկներ չհարթուկես:
14. Տատիկս շատ է սիրում գաթա թխել:
15. Պահարանդ դասավորիր, որ շորերդ գտնես:
16. Մաքուր ոսկին կրակից չի վախենա:
17. Այստեղ չի կարելի աղբ թափել:
18. Քո զավակներն ինքնաթիռում վատ են զգում:
19. Այստեղ չի կարելի ծխել:
20. Մեքենան այստեղ չի կարելի կայանել:

2. Read the following poem by Gegham Saryan (1900-1976). Use a dictionary and try translating it.

Գայի՝ սեղան նստեի ես՝
 Ու խմեի քո կենացը,
 Վերհիշեի նայելով քեզ
 Իմ խնդությունն ու իմ լացը:

Հազար սրտով օրհնեի ես
 Թե քեզ, թե քո զավակներին
 Հեովից եկած մտերմի պես
 Աստանդական ցուպը ձեռին:

Ու քեզանից հեռանալիս
 Զգույցի ես իմ լացը,
 Որ տեսնեիր ոնց է լալիս
 Սիրո ցավից ծերացածը:

3. Translate the following sentences into Armenian.

1. If only I was in Venice right now.
2. If only I never met you.
3. She came to Armenia in order to learn Armenian.
4. They collected a lot of money, to buy a house.
5. Put your pen on the table, so that it does not get lost.
6. If you want to know many people, participate in events.
7. They do sports so that they do not get ill.
8. Put the vase on the table, so that you do not drop it.
9. Walk faster, so that you get to school on time.
10. We will have finished our training on the 10th of July.
11. Hratch has studied in Australia.
12. The soldier had died before the doctor arrived.
13. She had bought white flowers.
14. The tourists have ordered Chinese food at the restaurant.

4. Convert the following sentences in future indicative mood into future subjunctive sentences.

1. Փողոցով վազող տղան գնալու է Վրաստան:
2. Հատակին պառկած աղջիկները հաղթելու են խաղը:
3. Նա մեքենան վարելիս տեսնելու է իր եղբորը:
4. Բարձրահասակ, ուժեղ մարդը քայլելու է քաղաքով:
5. Աթոռին նստած նիհար աղջիկը դառնալու է բժիշկ:
6. Ձու գողացող տղան եկող տարի գողանալու է ձի:
7. Պատին դրոշ նկարողը եկող շաբաթ նկարելու է մեծ մեքենա:
8. Քո անունը հիշող տղան հիշելու է նաև քո տան հասցեն:
9. Մեծ ծառին մոտենալիս դու տեսնելու ես երկու օձ:
10. Աղբը թափելիս դու հանդիպելու ես շատ մարդկանց:
11. Սենյակն ավելի ես գտնելու եմ շատ հին իրեր:
12. Տատիկիս հետ գաթա թխելիս մենք զբաղեցնելու ենք սեղանը:
13. Ծեր կնոջը խնամողը շատ դրամ է վաստակելու:
14. Ինքնաթիռիչք քիչ առաջ իջած մարդիկ գնալու են Գառնի:
15. Մարդկանց խաբելիս նրա դեմքը կարմրելու է:

5. Convert the following sentences in past continuous tense into sentences in past subjunctive.

1. Դուք լավ երգ էիք լսում:
2. Նրանք խանութ չէին գնում, նրանք գնում էին թանգարան:
3. Իմ ընկեր Համոն խորոված էր պատրաստում:
4. Մենք չէինք կարդում մենյուն, մենք կարդում էինք լրագիր:
5. Երբ մենք հանդիպեցինք, դուք էջմիածին չէիր այցելում:
6. Ես ծխախոտ չէի ծխում:
7. Նրանք ինձ չէին ժպտում:
8. Գնորդը չէր փոխանակում երկու օր առաջ առած զգեստը:
9. Այդ պահին մենք չէինք վճարում, մենք զրուցում էինք:
10. Երեխան աթոռին նստած չէր լացում, նա հաշվում էր իր կոնֆետները:
11. Դու չէիր քայլում:
12. Նա աշխատում էր օր ու գիշեր:
13. Հայաստան վերադառնալուց առաջ նա ամեն օր հայերեն էր սովորում:
14. Պարելուց առաջ նա խոսում էր իր ուսուցչի հետ:
15. Արարատ լեռը բարձրանալուց առաջ նա մարզվում էր:

Դաս Քսանյութերորդ

Obligatory Mood

Future Obligatory

In Armenian, the obligatory mood indicates actions that must be performed. Obligatory mood has 2 tenses: future and past. The future tense is formed by placing the word պետք է or պիտի “must” before a verb in the future subjunctive. Here is the conjugation of the word նկարել - “to paint.”

Singular	Plural
Ես պետք է նկարեմ:	Մենք պետք է նկարենք:
Դու պետք է նկարես:	Դուք պետք է նկարեք:
Նա պետք է նկարի:	Նրանք պետք է նկարեն:

1) Նա պետք է լվանա իմ շորերը:
She must wash my clothes.

2) Նա պետք է վճարի սուրճի համար:
She must pay for the coffee.

The future obligatory can be used both for actions that one must perform far in the future and at present.

1) Հիմա ես պետք է գնամ:
I must go now.

2) Այժմ դու պետք է ավելես հատակը:
You must sweep the floor now.

The negative of future tense in obligatory mood is formed by the expression չպետք է “must not”.

Singular	Plural
Ես չպետք է նկարեմ:	Մենք չպետք է նկարենք:
Դու չպետք է նկարես:	Դուք չպետք է նկարեք:
Նա չպետք է նկարի:	Նրանք չպետք է նկարեն:

Here are two examples:

1) Նա չպետք է նկարի պատին:
She must not paint on the wall.

2) Մենք չպետք է վճարենք սուրճի համար:
We must not pay for the coffee.

Notice that the sentence “Ես պետք է չնկարեմ:” is also grammatically correct. It means almost the same as “Ես չպետք է նկարեմ”, however, this is not a sentence in negative future. It is affirmative. The sentence affirms that I must do something, namely not paint.

To convey the idea that one is obliged to do something one can also use words like ստիպված լինել - “to be compelled”, “to be obliged”, “to have to”, հարկադրված լինել - “to obliged”, and պարտավոր լինել- “to have the duty of.” Here are a few examples:

- 1) Դու ստիպված ես ավարտել գործը:
You have to finish the work.
- 2) Նա հարկադրված էր սպասել ձեզ:
She is obliged to wait for you.
- 3) Ես պարտավոր եմ նկարել քեզ:
It is my duty to paint you.

Past Obligatory

The past obligatory is formed by placing the word պետք է or պիտի “must” before a verb in the past subjunctive. Here is the conjugation of the word նկարել-to paint.

Singular	Plural
Ես պետք է նկարեի:	Մենք պետք է նկարեինք:
Դու պետք է նկարեիր:	Դուք պետք է նկարեիք:
Նա պետք է նկարեր:	Նրանք պետք է նկարեին:

Here are sentences that use the past obligatory.

- 1) Յուրաքանչյուրը պետք է իր գիրքը բերեր:
Each person should have brought her book.
- 2) Նրանք պետք է խորոված պատվիրեին:
They should have ordered barbecue.

The negative of past obligatory is formed with the help of չպետք է or չպիտի which is placed before the main verb in past subjunctive.

Singular	Plural
Ես չպետք է նկարեի:	Մենք չպետք է նկարեինք:
Դու չպետք է նկարեիր:	Դուք չպետք է նկարեիք:
Նա չպետք է նկարեր:	Նրանք չպետք է նկարեին:

The following negative sentences use past obligatory.

- 1) Ոչ մեկը չպետք է մոռանա իմ օգնությունը:
No one must forget my help.
- 2) Մենք չպետք է նստենք նրանց մոտ:
We must not sit next to them.

DIALOGUE: ԱՆՁԻՆ ՆԿԱՐԱԳԻԵԼԸ / DESCRIBING A PERSON

_Սարգիս դուք շատ ուժեղ եք: Իսկ ձեր ընկերը՝ Կարենը, թույլ է:	Sargis duk` shat uzhegh ek`. Isk dzer a`nkera`, Karen a` t`uyl e.	Sargis you are very strong. But your friend, Karen, is weak.
_Այո, ես զբաղվում եմ սպորտով: Իսկ Կարենը չի զբաղվում սպորտով:	Ayo, yes zbaghvum em sportov. Isk Karen a` chi zbaghvum sportov.	Yes, I do sports and Karen does not do sports.
_Բացի այդ, ես երիտասարդ եմ, իսկ Կարենը՝ տարեց:	Bats`i ayd, yes yeritasard em, isk Karen a` tarets`.	Besides, I am young, and Karen is old.
_Դուք բարձրահասակ եք և նիհար:	Duk` bardzrahasak ek` yev nihar.	You are tall and skinny.
_Այո, ես բոյով եմ և նիհար: Իսկ իմ ընկերը կարճահասակ է և գեր:	Ayo, yes boyov em yev nihar. Isk im a`nkera` kartsahasak e yev ger.	Yes, I am tall and skinny. And my friend is short and fat.
_Որքա՞ն է ձեր հասակը:	Vork`an e dzer hasaka`?	How tall are you?
_Իմ հասակը 180 սմ է, իսկ ընկերոջ հասակը՝ 158 սմ:	Im hasaka haryur ut`sun santimetr e. Isk im a`nkeroj hasaka` 158 santimetr e.	My hight is 180 sm. and my friend`s hight is 158 sm.
_Դուք ունեք սև մազեր, իսկ ձեր ընկերը շեկ է:	Duk` unek` sev mazer, isk dzer a`nkera` shek e.	You have black hair, and your friend is blond.
_Այո, բացի այդ, ես ունեմ սև աչքեր: Իսկ ընկերս ունի կապույտ աչքեր:	Ayo, bats`i ayd, yes unem sev achk`er. Isk a`nkers uni kapuyt achk`er.	Yes, besides, I have black eyes and my friend has blue eyes.
_Դուք ունեք թուխ մաշկ: Իսկ ձեր ընկերոջ մաշկը բաց գույն ունի:	Duk` unek` t`ukh mashk. Isk dzer a`nkeroj mashka` bats` guyn uni.	You have dark skin, while your friend`s skin is light.

New Words

ուժեղ	strong		բարձրահասակ	tall
թույլ	weak		կարճահասակ	short
երիտասարդ	young		թուխ	dark (about skin)
տարեց	old		շեկ	blond, fair
հասակ	height		նիհար	slim
մաշկ	skin		զեր	fat, overweight

Վարժություններ / *Exercises*

1. Form the future tense of the obligatory mood of the following verbs for all persons.

1. Նկարել, 2. եփել, 3. հագնել:

2. Form the past tense of the obligatory mood of the following verbs for all persons.

1. Շտապել, 2. ասել, 3. տալ, 4. պատմել:

3. Translate the following sentences into Armenian.

1. I have to cut my hair, it is too long.
2. The leader must be humble.
3. There should be no problems among friends.
4. Karen has to work on the weekend
5. One has to be careful while crossing the street.
6. My friend must work hard on his English to get a job.
7. Anush has to be more attentive.
8. The doctor must answer to our questions.
9. I should give these tomatoes to her yesterday.
10. You should tell this secret to the police when he asked.
11. I wish I was taller.
12. I wish no one had cancer in this world.
13. If only my daughter wins tomorrow.
14. If only they get to Washington on time.
15. If only you were able to speak.
16. If only I could grow up faster.
17. If only she could get her money from the bank.
18. I wish you brought the book.
19. If only Mher invited me to his concert on Saturday.
20. Last year we went to France so that we would learn French.
21. If only she waited form me.
22. She took the box, so that her mother could pass.
23. You are a bad teacher. I wish I never offered you a job.
24. I am a doctor. But I wish I had become a businessman.
25. I wish the classes started at 10:30.

26. If only they believed me.
27. If only someone helped me today.
28. If only our teacher was with us.
29. If only you had told me the truth sooner.
30. I wish I found a million dollars.

4. Translate the following sentences into English.

1. Թող երջանիկ լինի:
2. Թող բոլոր երեխաները երկար կյանք ունենան:
3. Թող ամբողջ կյանքում լինի առողջ և հաջողակ:
4. Թող անփորձանք լինենք, ուրիշ ոչինչ չեմ խնդրում:
5. Թող իմ եղբայրը դժվարությունների չհանդիպի:
6. Պետք է օգնել թույլերին:
7. Չպետք է ատել շեկ և գեր մարդկանց:
8. Նա պետք է օրհներ իր գավակներին:
9. Դու պետք է զսպեիր քո ուրախությունը:
10. Դու չպետք է նրա զգեստի վրա թափեիր գինին:
11. Ես պետք է ամեն ինչ դանդաղ ասեի, որ նա հասկանար:
12. Մենք հաջորդ շաբաթ պետք է ռեստորանում ձուկ պատվիրենք:
13. Նրա օգնությունն ընդունելուց առաջ դու պետք է ինձ հարցնեիր:
14. Զգեստը փորձելուց առաջ պետք է հարցնեիր վաճառողին:
15. Դու պետք է քո ձեռքի դոլարները փոխանակես:

Դաս Քսանութերորդ

Conditional Mood

The conditional mood has two tenses.

Future Conditional

The future conditional is used for expressing actions or events that probably will happen or will happen under certain conditions. The future conditional tense is formed in the same way as the subjunctive mood – with the addition of the letter *լ* in front of the verb.

Forms of future conditional:

-ել Verbs		-ալ Verbs	
գրել- to write		կարդալ- to read	
կգրեմ	կգրենք	կկարդամ	կկարդանք
կգրես	կգրեք	կկարդաս	կկարդաք

կգրի	կգրեն		կկարդա	կկարդան
------	-------	--	--------	---------

1) Ես մյուս տարի կգնամ Գյումրի:
I will go to Gyumri next year.

2) Երբ վերադառնամ տուն, կպատմեմ:
When I return home, I will tell.

Notice that in sentence 1) nothing is said about the condition(s), in case of which I will go to Gyumri. That the conditional future can be used without explicitly stating the conditions, makes certain uses of the future conditional similar to that of the future indicative we have covered above. Both of these structures are frequently used for referring to future actions and events, however “Ես մյուս տարի գնալու եմ Գյումրի:” is more certain than the sentence “Ես մյուս տարի կգնամ Գյումրի:”

In sentence 2) the conditional is stated. The (pre)condition of me telling, is that I return home.

The affirmative verb “to be” in the conditional future tense becomes:

Ես կլինեմ	Մենք կլինենք
Դու կլինես	Դուք կլինեք
Նա կլինի	Նրանք կլինեն

- 1) Եկող տարի կլինեմ տասը տարեկան:
Next year I will be 10 years old.
2) Վեց ամիս հետո նրանք հարուստ կլինեն:
They will be rich after 6 months.

The negative of the verb “to be” is conjugated as follows.

Ես չեմ լինի	մենք չենք լինի
դու չես լինի	դուք չեք լինի
նա չի լինի	նրանք չեն լինի

The negative future conditional is formed with the help of corresponding negative future auxiliary and the 3rd person singular form of the verb in subjunctive future.

-ալ Verbs լողալ		-ել Verbs քայլել	
Ես չեմ լողա	մենք չենք լողա	Ես չեմ քայլի	մենք չենք քայլի
դու չես լողա	դուք չեք լողա	դու չես քայլի	դուք չեք քայլի

Here are a few sentences that use negative future conditionals:

- 1) Նա ոչ մի տեղ չի լողա:
She will not swim anywhere.
- 2) Մենք առանց քեզ չենք քայլի:
We will not walk without you.
- 3) Նա ոչ մեկին չի օգնի:
He will help nobody.
- 3) Ես գիտեմ, որ դուք ինձ չեք սպասի:
I know that you will not wait for me.
- 4) Եթե դու ինձ չօգնես, ես երկու տարի հետո բժիշկ չեմ լինի:
If you do not help me, I will not be a doctor in two years.
- 5) Եթե նա լավ չսովորի, նա գործարար չի դառնա:
If she does not study well, she will not become a businesswoman.

Pay attention to sentences 4) and 5). These are complex sentences: they are composed of more than one sentence. Their main sentences are correspondingly “երկու տարի հետո բժիշկ չեմ լինի” and “նա գործարար չի դառնա.” These sentences, as you probably notice, have verbs in future conditional. The secondary sentences “դու ինձ չօգնես” and “նա լավ չսովորի” are in subjunctive. Subjunctive is also used in other similar clauses with երբ - “when”, որ - “that”, and որպեսզի - “so that”, “in order to.”

Past Conditional

The past tense of the conditional mood is used to express an action that under certain conditions would supposedly take place in the past but did not. It is formed by using the past subjunctive mood and adding the letter “կ” in front of the word.

Գրել		Կարդալ	
ես կգրեի	մենք կգրեինք	ես կկարդայի	մենք կկարդայինք
դու կգրեիր	դուք կգրեիք	դու կկարդայիր	դուք կկարդայիք
նա կգրեր	նրանք կգրեին	նա կկարդար	նրանք կկարդային

Here are sentences that use past conditional:

- 1) Ես կգրուցեի նրա հետ, եթե իմանայի այդ դեպքի մասին:
I would talk to her if I knew about that incident.
- 2) Նրանք անպայման կօգնեին մեզ, եթե մենք նրանց խնդրեինք:
They would definitely help us, if we asked them.

To form the negative of the past conditional tense, the third person singular of the past subjunctive is used along with the past of the auxiliary verb “to be.”

Գրել	
ես չեի գրի	մենք չէինք գրի
դու չեիր գրի	դուք չեիք գրի
նա չեր գրի	նրանք չէին գրի

Կարդալ	
ես չեի կարդա	մենք չէինք կարդա
դու չեիր կարդա	դուք չեիք կարդա
նա չեր կարդա	նրանք չէին կարդա

- 1) Ես ոչինչ չեի ասի, եթե իմանայի, որ դա գաղտնիք է:
I would not say anything, if I knew that it was a secret.
- 2) Նա մեզ չեր զանգի, եթե իմանար, որ մենք այստեղ ենք:
She would not call us, if she knew that we were here.

The negative conditionals (both past and future) are also used for polite requests.

- 1) Ներողություն, չե՞ք ասի ժամը քանիսն է:
Excuse me, would you tell me what time it is?
- 2) Դուրս չե՞ի՞ք բացի:
Would you please open the door?

DIALOGUE: ՏԱՆԸ / IN THE HOUSE

_Իմ տունը Երևանում չէ: Իմ տունը Գյումրիում է:	Im tuna` Yerevanum che. Im tuna` Gyumrium e.	My house is not in Yerevan. My house is in Gumri.
_Քո տունը մեծ է:	K`o tuna` mets e?	Is your house large.
_Այո, իմ տունը մեծ է: Իմ տունն ունի հյուրասենյակ, երկու ննջարան, լայն միջանցք և ընդարձակ խոհանոց:	Ayo, im tuna` mets e. Im tunn uni hyurasenyak, yerku nnjaran, layn mijants`k` yev andardzak khohanots`.	Yes, my house is large. My house has a living room, two bedrooms, a wide corridor and an expansive kitchen.
_Իհարկե, իմ տանը կա նաև բաղնիք և զուգարան:	Of course my house also has a bathroom and a toilet.	Of course my house also has a bathroom and toilet.
_Ո՞ր հարկում է քո տունը:	Vor harkum e k`o tuna`?	In which floor is your house on?
_Իմ տունը չորրորդ հարկում է:	Im tuna` chorrord harkum e.	My house is on the 4th floor.
_Քո տունը պատշգամբ ունի:	K`o tuna` patshgamb uni?	Does your house have a balcony?
_Ոչ, իմ տունը պատշգամբ չունի:	Voch, im tuna` patshgamb chuni.	No, my house does not have a balcony.
_Դու արդեն կահույք գնե՞լ ես:	Du arden kahuyk` gnel es?	Have you already bought furniture?

_Այո, ես արդեն գնել եմ սեղան և աթոռներ:	Ayo, yes arden gnel em seghan yev at'or`ner.	Yes, I have already bought a table and chairs.
_Շատ լավ է: Իսկ պահարաններ չունե՞ս:	Shat lav e. Isk paharanner chunes?	Very good. And don't you have wardrobes?
_Ես պատվիրել եմ: Շուտով իմ տուն կբերեն պահարաններ և բազմոց:	Yes patvirel em. Shutov im tun kberen paharanner yev bazmots`.	I have ordered. Soon they will bring wardrobes and a sofa.

New Words

հյուրասենյակ	living room	ընդարձակ	expansive
ննջարան	bedroom	իհարկե	of course
միջանցք	corridor	հարկ	floor
խոհանոց	kitchen	կահույք	furniture
բաղնիք	bathroom	բազմոց	sofa
զուգարան	toilet	պահարան	wardrobe
պատշգամբ	balcony	սեղան	table
լայն	wide	աթոռ	chair

Վարժություններ / *Exercises*

1. Form the affirmative future conditional tense of the following verbs for all persons.

1. Ազատել, 2. հեռանալ, 3. լռել, 4. չպատմել, 5. չմաքրել:

2. Form the past conditional tense of the following verbs for all persons.

1. Բարևել, 2. նկարել, 3. ստուգել, 4. պահել, 5. չհիշել, 6. չքնել, 7. չպառկել:

3. Choose the right form of the verb and fill in the blanks.

- Գեներալը բոլոր զինվորներին հրամայեց _____ (պառկել, կպառկի, պառկեցեք):
- Դուք _____ (կգնայի՞ք, գնացեք, գնալիով) Վանաձոր, եթե ես ձեզ չխանգարեի:
- Բոլորդ _____ (լրացրեք, կլրացնենք, լրացնել) այս թերթիկները:
- Վաղը երեկոյան ինձ _____ (զանգել, կզանգե՞ս, զանգեցիր):

5. Մենք այգում նստած _____ (կգրուցենք, գրուցում, գրուցի՞ր) մինչև դու գաս:
6. Ես քո հետ չեմ ուզում լինել. _____ (գնալ, գնա, գնում) Լուսինեի մոտ:
7. Ուսանողը _____ (հասկանա, կհասկանար, հասկացավ), եթե լավ օրինակներ տայիք:
8. Նա _____ (կպայքարեմ, պայքարեր, կպայքարի) մինչև վերջ:
9. Եթե դու _____ (չես բռնում, չես բռնելու, չբռնեիր), գնդակը կկոտրեր ապակին:
10. Հաջորդ անգամ ես անպայման _____ (կգնեմ, կգնեի, կգնի) երկու հաց:

4. Continue the sentences.

1. Եթե ես ձեզ շուտ հանդիպեի, ես _____
2. Երբ եղբայրս Երևան գա, մենք _____
3. Եթե ինձ չընդհատես, ես _____
4. Երբ Միքայելին հանդիպես, _____
5. Եթե չես ուզում դժբախտության հանդիպել, _____

5. Translate the following sentences into English.

1. Եթե Թոմը բանալի չունենար, ես դրսում կմնայի:
2. Եթե մենք վազեինք, ժամանակին տեղ կհասնեինք:
3. Եթե համալսարանն ավարտեիք, լավ աշխատանք կգտնեիք:
4. Եթե մեզ մոտ գաս, բոլոր գործերդ հաջող կընթանան:
5. Գողին կբռնեն, եթե ոստիկանը սուլի:
6. Ամռանը մենք միասին չենք լինի:
7. Մյուս անգամ դու մեզ հետ չես գա թատրոն, կմնաս տանը և ընթրիք կպատրաստես:
8. Բոլորը կվճարեն իրենց կատարած հանցանքների համար:
9. Հավատա, որ գողին կբռնեն և նրանից ետ կվերցնեն քո ոսկե խաչը:
10. Հույս ունեմ, որ վաղն Արարատ լեռը կերևա:
11. Գարնանը ծիծեռնակները նորից կվերադարնան:
12. Դու վստահ ես, որ «Բարսելոնան» այս անգամ չի հաղթի:
13. Ինչպես անցյալ անգամ, այս անգամ ևս նա չի նստի քո մեքենան:
14. Նա կգա քեզ մոտ և իր արածի համար ներողություն կխնդրի:
15. Ես կգանգեմ տատիկիս և կշնորհավորեմ նրա ծննդյան օրը:
16. Ջրի բերածը քամին կտանի:
17. Մեղը վաճառողն իր մատը կլպստի:
18. Մեկ ծաղկով գարուն չի գա:
19. Իմ մահվան լուրը կշրջի փողոցներում:
20. Իմ մահվան օրը կիջնի լռություն (Ե. Չաբենց):

6. Choose the right form of the verb from the brackets and fill in the blanks.

1. Եթե դու շատ _____ (աշխատես, կաշխատես), հաջողության _____ (կհասնես, հասնես):

2. Եթե դու առավոտյան վաղ _____ (արթնանաս, կարթնանաս), դասից _____ (չուշանաս, չես ուշանա):
3. Դուք ավելի շուտ _____ (սովորեք, կսովորեք) հայերեն, եթե ուշադիր լինեք:
4. Երբ _____ (տեսնես, կտեսնես) Հասմիկին, բարևիր իմ կողմից:
5. Նա ձեզ կօգնե, եթե դուք նրան _____ (կխնդրեիք, խնդրեիք):
6. Ես _____ (կգայի, կգամ) ձեզ հետ թատրոն, բայց շատ եմ զբաղված:
7. Մի բռայե _____ (չե՞ ի՞նչ սպասի, չսպասե՞ք), նա հիմա կվերջացնի գործը:
8. Այնպե՛ս _____ (եմ ուզում, եմ ուզենալու, կուզեմ) հիմա ծովափում լինել:
9. Ի՞նչ _____ (կցանկանայիք, ցանկանում եք) խմել:
10. Հակոբն ասաց, որ _____ (կաշխատեր, կաշխատի) այդ ընկերությունում, եթե բարձր աշխատավարձ տային:

7. Translate the following sentences into Armenian.

1. If you want to see my house, come.
2. If you want to know my name, ask me.
3. They would give you money, if they had any.
4. I am sure children will participate in your class.
5. Your grandfather is very ill. He will die soon.
6. Soon you will feel everything.
7. If you had told me the truth, I would not assume that you forgot about me.
8. If she had lived in the USA before, she would understand everything you said.
9. If we were born in the 13th century, we would be poor farmers.
10. If they were not painters, they would never paint our house.

Դաս Քսանիններորդ

The Passive and Active Voice

In Armenian, the passive voice is formed by adding the letter “վ” right after the verb stem and before the corresponding verb ending. Here are a few examples: սպանել - սպանվել (to kill and to be killed), կառուցել - կառուցվել (to build and to be built), վնասել - վնասվել (to harm and to be harmed).

This rule of adding “վ” right after the verb stem works not only for present, but also for past and future tenses, not only for the indicative mood, but also for the imperative, subjunctive, obligatory and the conditional.

For example: “սպանեցին մեկին” changes to “մեկը սպանվեց”, “կառուցելու են տներ” to “կառուցվելու են տներ”, “վնասեցի նրան” to “նա վնասվեց”, “վաճառեցինք տանձ” to “տանձ վաճառվեց”, “պետք է պատռեմ” to “պետք է պատռվի” etc.

Here are a few sentences using the passive voice.

- 1) Արքիմեդը սպանվեց:
Archimedes was killed.
- 2) Շեքսպիրի գիրքն այվեց:
Shakespeare's book was burnt.
- 3) Բոլոր հանցագործները կախվելու են:
All criminals will be hanged.
- 4) Երանի բոլոր հիվանդները բուժվեին:
If only all patients were cured.

Very often sentences in passive voice, as four sentences just listed, have no subject. But they can have subject, which is introduced via the following structure: the structure “word in genitive + կողմից” - “by ...” Here are two examples:

- Active Voice: Վարդանը վճարեց ամբողջ գումարը:
Vardan paid the whole amount.
- Passive Voice: Ամբողջ գումարը վճարվեց Վարդանի կողմից:
The whole amount was paid by Vardan.
- Active Voice: Գործարարը խաբեց Սուրենին:
The businessman lied to Suren.
- Passive Voice: Սուրենը խաբվեց գործարարի կողմից:
Suren was deceived by the businessman.

In some cases the instrumental case may be used. For example:

- Active Voice: Կայծակը սպանեց նրան:
The lightning killed him.
- Passive Voice: Նա սպանվեց կայծակից:
He was killed by lightning.

There are a few verbs which are irregular in the passive voice. Here is a partial list:

կարդալ	to read	կարդացվել	to be read
զգալ	to feel	զգացվել	to be felt
դնել	to put	դրվել	to be put
տանել	to carry	տարվել	to be carried
տալ	to give	տրվել	to be given

1) Ոչ մի լավ բան հեշտությամբ չի տրվում:

Nothing good is given easily.

2) Այս գիրքը դժվարությամբ է կարդացվում:

This book is read with difficulty.

3) Քո զայրույթն զգացվեց:

Your anger was felt.

Verbs that end in -անալ or -ենալ replace these endings with -ացվել and -եցվել in passive voice. Here are a few often used verbs that form their passive voice in this manner.

միանալ	to join	միացվել	to be united
քաղցրանալ	to become sweet	քաղցրացվել	to be made sweet
մեծանալ	to become big	մեծացվել	to be made big
փոքրանալ	to become small	փոքրացվել	to be made small
հասկանալ	to understand	հասկացվել	to be understood

Here are two examples:

1) Նկարը հինգ անգամ մեծացվել էր:

The picture was made five times bigger.

2) Դանիելի ասածը չհասկացվեց:

Whatever Daniel said was not understood.

Some verbs gain a reflexive meaning (taking action upon yourself) when changed into the passive voice:

լվանալ	to wash something	լվացվել	to wash oneself
սանրել	to comb something	սանրվել	to comb oneself
հագնել	to put on something	հագնվել	to dress oneself
պաշտպանել	to defend someone/thing	պաշտպանվել	to defend oneself
սափրել	to shave someone/thing	սափրվել	to shave oneself

- 1) Նա երբեք չի սափրվում:
He never shaves (himself).
- 2) Հայերը կարողանում են պաշտպանվել:
Armenians are able to defend themselves.

Some verbs simply do not have the passive voice. Here is a partial list of such verbs.

ունենալ	to have	խնդրել	to ask, to make a request
մասնակցել	to participate	երևալ	to appear
հասնել	to reach to a place	լալ	to cry
սուլել	to whistle	դառնալ	to become
լինել	to be	ծիծաղել	to laugh

Causative Verbs

Causative verbs are used to indicate one person or thing being a cause of the action of a second person or thing. In English we often use the helping verb “make” to form causatives, as in “to make someone laugh” or “to make something brown.” In Armenian we form the causative by adding the suffixes “ացն” and “եցն” to the root of “-ալ” and “-ել” verbs respectively. For example: գրել - գրեցնել (to write and to make one write), ծխել - ծխեցնել (to smoke and to make one smoke), լսել - լսեցնել (to hear and to make one hear) etc.

If the verb ends in -անալ or -ենալ the -անալ or -ենալ is replaced with -ացնել or -եցնել respectively. Here is a partial list of such verbs and their causative forms.

հանգստանալ	to relax, to rest	հանգստացնել	to calm someone or something down
անհանգստանալ	to be worried	անհանգստացնել	to bother
գեղեցկանալ	to get pretty	գեղեցկացնել	to make pretty
զայրանալ	to be angry	զայրացնել	to make angry
զարմանալ	to be surprised	զարմացնել	to surprise
զգուշանալ	to be cautious	զգուշացնել	to warn
ծանոթանալ	to become acquainted	ծանոթացնել	to acquaint
ձանձրանալ	to become bored	ձանձրացնել	to bore
մոտենալ	to come near	մոտեցնել	to approach
վախենալ	to be scared	վախեցնել	to scare

վերջանալ	to end	վերջացնել	to finish
ուշանալ	to be late	ուշացնել	to make late

There are a few verbs that have irregular causative forms. The following is a list of often-used verbs with both regular and irregular changes.

զբաղվել	to be busy	զբաղեցնել	to occupy
հիասթափվել	to be disappointed	հիասթափեցնել	to disappoint
լացել	to cry	լացացնել	to make cry
ծիծաղել	to laugh	ծիծաղեցնել	to make laugh
հիշել	to remember	հիշեցնել	to remind
սպասել	to wait	սպասեցնել	to make wait
դառնալ	to become	դարձնել	to convert
վերադառնալ	to return(come back)	վերադարձնել	to make someone return to give something back
կորչել	to get lost	կորցնել	to lose

The following sentences use verbs with irregular causative forms:

- 1) Նրա կատակները ծիծաղեցրեցին մեզ:
His jokes made us laugh.
- 2) Դու ինձ ձանձրացնում ես:
You are making me bored.
- 3) Զգուշացրու քո ընկերոջը:
Warn your friend.
- 4) Խնդրում եմ՝ սենյակը մի զբաղեցրեք:
Please do not occupy the room.
- 5) Մենք ձեզ չենք սպասեցնի:
We will not make you wait.

In Armenian, the idea of making someone do something can be expressed in other ways too.

- 1) Infinitive + տալ (to give)

կարդալ տալ մեկին	to make somebody read
խմել տալ մեկին	to make somebody drink

գրել տալ մեկին	to make somebody write
----------------	------------------------

2) ստիպել (to compel), հարկադրել (to compel, to oblige), պարտադրել (to oblige) + infinitive

մեկին ստիպել կարդալ	կարդալ տալ մեկին
մեկին հարկադրել պարել	խմել տալ մեկին
մեկին պարտադրել աշխատել	գրել տալ մեկին

The following sentences feature these structures:

- 1) Տատիկս ինձ պարտադրեց սովորել վրացերեն:
My grandma obliged me to study Georgian.
- 2) Ես ուսանողներին ստիպեցի կարդալ Արիստոտելի գործերը:
I compelled students to read Aristotle's works.
- 3) Մենք նրան հինգ ժամ սպասեցի տվեցինք:
We made him wait for five hours.

DIALOGUE: ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ / CHARACTER

_Դու լավ բնավորություն ունես: Du lav bnavorut`yun unes. You have a good character.

_Շնորհակալություն: Բայց իմ բնավորության ո՞ր գծերն ես հավանում: Shnorhakalut`yun. Bayts im bnavorut`yan vor gtsern es havanum. Thank you. But which characters traits of mine do you like?

_Դու բարի ես և համեստ: Du bari es yev hamest. You are kind and modest.

_Իսկապե՞ս կարծում ես, որ բարի եմ: Iskapes kartsum es, vor bari em? Do you really think I am kind?

_Իհարկե բարի ես: Բացի այդ ազնիվ ես և խելացի: Iharke bari es. Batsi ayd azniv es yev khelatsi. Of course you are kind. Besides, you are honest and smart.

_Մայրս ասում է, որ ես համարձակ չեմ: Mayrs asum e, vor yes hamardzak chem. My mother says that I am not courageous.

_Այո, շատ համարձակ չեմ, բայց աշխատասեր եմ և համբերատար: Ayo, shat hamardzak ches, bayts ashkhatazer es yev hamberatar. Yes, you are not very courageous. But you are hardworking and patient.

_Շնորհակալ եմ: Ինձ շատ ոգևորեցիր: Shnorhakal em. Indz shat vogevorets`ir. Thank you. You encouraged me a lot.

Ասում եմ այն, ինչ ճիշտ Asum em ayn, inch tsisht e. I am telling the truth.
Է:

New Words

բնավորություն	character	հիմար	stupid
գիծ	line	համարձակ	courageous
աշխատասեր	hard working	վախկոտ	coward
ծույլ	lazy	համբերատար	patient
բարի	kind	անհամբեր	impatient
համեստ	modest	նզկոթել	to encourage
մեծամիտ	conceit	հավանել	to like
խելացի	smart		

Վարժություններ / *Exercises*

1. Convert the following sentences from active voice into passive voice. The first sentence is converted for you.

- Բանվորը պատռեց սև գիրքը: - Սև գիրքը պատռվեց բանվորի կողմից:
- Նրանք պաշտպանում են մեր հայրենիքը:
- Քո պապիկը ջրում է այս գյուղի ծառերը:
- Ամռանն արև է լուսավորում է Արարատյան դաշտը:
- Հույներն ու թուրքերը պետք է սիրեն միմյանց:
- Նա ոչինչ չի տանում այստեղից:
- Կառավարությունն օգնություն է տալիս թոշակառուներին:
- Կ. Մարքսի «Կապիտալը» ոչ մեկ չի կարդում:
- Ինչ-որ մեկը կարմիր խնձորը դրել է սեղանին:
- Այս բազմոցը պատրաստել է Գառնի գյուղի մի վարպետ:
- Դու երկու շաբաթ առաջ ես կտրել քո մազերը:
- Այս երկու կազմակերպությունները միացել են:
- Մենք հիշում ենք մեր մանկությունը:
- Դուք սպասում ենք անձրևի:
- Նրանք տասը լիտր ջուր են խմել:

2. Translate the following sentences into English.

- Ոստիկանները մեզ երկու ժամ սպասեցրել են:

2. Երաժշտությունն անհանգստացնում է բոլոր մարդկանց:
3. Նա մոռացել էր, որ պետք է գանգեր ինձ: Դու պետք է հիշեցնեիր նրան:
4. Քո պատմությունն ինձ շատ զարմացրեց:
5. Նա կամաց-կամաց իր աթոռը մոտեցրեց պատին:
6. Շունը բոլորին վախացրեց և վազել տվեց:
7. Խնդրում եմ ինձ ծանոթացրու Արսենի հետ:
8. Վերջացրու՝ այս աշխատանքը:
9. Նա պետք է գեղեցկացնի մեր բակը, որպեսզի աշխատավարձ ստանա:
10. Դուք շարունակում եք ինձ անընդհատ զարմացնել ձեր պատմություններով:
11. Ծաղրածուն բոլոր երեխաներին երկու ժամ ծիծաղեցրեց:
12. Բանվորը ծանր քարերը մոտեցրեց ձեր տան պատին:
13. Այս երգչուհու երգերը լացացնում են բոլորին:
14. Ես քեզ զգուշացնում եմ. այլևս երբեք չգաս մեր տուն:
15. Մի՛ փորձիր ինձ վախեցնել: Ես վախոցող մարդ չեմ:
16. Ինչու՞ եք ինձ այս ուշ ժամին անհանգստացնում:
17. Դուք ինձ երբեք չեք ձանձրացնում: Հանգիստ խոսեք:
18. Այս ծառը շատ գեղեցկացնում է նրանց այգին:
19. Հիշե՛ք որ մենք պետք է գնանք Գյումրի:
20. Մի՛ դարձիր բանվոր, դարձի՛ր գործարար:
21. Լավ է մաքուր սիրտ ունենալ, քան լիքը քսակ:
22. Խելացի մարդը ծույլ չի լինի:
23. Սա համեմատաբար մեծ խանութ է:
24. Հայրը ոգևորում է երեխաներին:
25. Շնորհավորում եմ ծնունդդ, Արտակ ջան:

3. Convert the sentences given with the եցն and ացն structures into sentences with տալ: The example will clarify the exercise.

Մայրը լռեցրեց երեխաներին: Changes to Մայրը երեխաներին լռել տվեց:

1. Բժիշկը հիվանդին դեղ խմեցրեց:
2. Շունը ջղայնացրեց տիրոջը:
3. Նրան գործարանում աշխատեցրին:
4. Գնե՛րալը բոլոր զինվորներին վազեցրեց:
5. Հյուրանոցում երեկ մեզ երկու ժամ սպասեցրին:
6. Ոստիկանը հանցագործին հիշեցրեց նրա բոլոր հանցանքները:

4. Translate the following sentences into English.

1. Բոլորը հավանում են քեզ:
2. Մեր նոր տնօրենը համեստ և աշխատասեր երիտասարդ է:
3. Ծույլ մարդկանց ոչ ոք չի հավանում:
4. Դու պետք է լինես համարձակ և խելացի:
5. Նա ոգևորվեց տնօրենի խոսքերից:
6. Գարնանը սարերն ազատվում են ձյունից:
7. Ամբողջ գործը կատարվեց երեք հոգու կողմից:

8. Նրա կյանքը կրճատվեց հիվանդության պատճառով:
9. Եկեղեցին բոլորին հնազանդվել տվեց:
10. Խանութը կառուցվեց երեք տարում:
11. Ամեն առավոտ ես լվացվում եմ, հագնում իմ շորերը, սանրվում և դուրս գալիս տանից:
12. Ես սափրվում եմ շաբաթը երկու անգամ:
13. Հայերը պարտավոր են պաշտպանվել աղբբեջանական բանակից:
14. Ավելի լավ է սանրվես:
15. Նախ լվացվիր, հետո նստիր սեղանի մոտ:
16. Տատիկը նորից կորցրել է իր ակնոցը:
17. Այս շենքը կառուցվել է մոտ հարյուր տարի առաջ:
18. Բոլոր հիվանդները բուժվել են:
19. Այս համակարգիչը պատրաստվել է Հայաստանում:
20. Մարգիկի ոտքը կոտրվել է:

Դաս Երեսուներորդ

Prepositions and Postpositions

In the Armenian language there are both prepositions and postpositions.

The chart below lists most commonly used prepositions, their translations and sentences using the prepositions are presented. The list also suggests a strategy to build grammatically correct sentences with these prepositions.

Preposition	Translation	Use objects in	Examples
ըստ	according to	dative	Ըստ Վարդանի՝ ամենակարևոր գիրքն Աստվածաշունչն է: According to Vardan, the most important book is the Bible. Ըստ քեզ՝ մենք առողջ ենք: According to, you we are healthy.
դեպի	toward	accusative	Մենք քայլում ենք դեպի ռեստորան: We are walking towards the restaurant.
առանց	without	dative	Առանց կանանց ես կյանք չունեմ: I have no life without women. Առանց ինձ նա կյանք չունի: She does not have life without me.
մինչ(և)	until	accusative	Մինչև գարուն ոչինչ անել չենք կարող: We cannot do anything until the spring.
նախքան	before	accusative	Նախքան ինձ զանգելը կարդա նամակներդ: Read your letters before calling me.
չնայած	despite	dative	Չնայած բոլոր դժվարություններին, նա հաղթեց: She won despite all difficulties.
հակառակ	against	dative	Նա ամուսնացավ իր կամքին հակառակ: She got married against her will.

The objects of above prepositions that require objects in dative case, do not get the definite article **ը** or **ն**: As examples above suggest **չնայած** and **հակառակ** are exceptions.

All of the below postpositions take objects which have the form of the genitive case. Some of these postpositions actually take objects in dative but these objects never take the definite article. See the remark below the chart.

Postposition	Translation	Examples
--------------	-------------	----------

համար*	for	Նա հյուրերի համար սուրճ պատրաստեց: She made some coffee for the guests. Դու ինձ համար սուրճ պատրաստեցիր: You made coffee for me.
հետ*	with	Մենք աշխատում ենք այլ մարդկանց հետ: We work with other people. Ես քեզ հետ եմ ապրում: I live with you.
մոտ*	near	Նրանք գնում են կրակի մոտ: They go near the fire. Նա գալիս է քեզ մոտ: She is coming to (near) you.
մեջ*	in	Ջուրը բաժակի մեջ է: The water is in the cup.
մասին	about	Ինչի՞ մասին ես խոսում: What are you talking about?
վրա	on	Գիրքը սեղանի վրա է: The book is on the table.
տակ	under	Սեղանի տակ կատու կա: There is a cat under the table.
կողքին	beside	Արևիկը միշտ նստում է Ելենայի կողքին: Arevik always sits beside Elena.
դիմաց	in front of	Մեր տան դիմաց գիլասի ծառեր կան: There are some cherry trees in front of the house.
հետևում	behind	Տղան թաքնվել էր ցանկապատի հետևում: The boy was hiding behind the fence.
միջև	between	Հայաստանը գտնվում է Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Armenia is between Turkey and Azerbaijan.
երկայնքով	along	Մենք քայլեցինք ճանապարհի երկայնքով: We walked along the road.
միջով	through	Այս խողովակի միջով ջուր է հոսում: Water flows through this pipe.
փոխարեն	instead of	Ես կգնամ քո փոխարեն: I will go instead of you.
ընթացքում	during	Անցյալ տարվա ընթացքում, միայն չորս անգամ տեսա տատիկիս: During last year I only saw my grandmother four times.
պատճառով	because of	Ցավի պատճառով նա չէր կարող արագ քայլել: Because the pain, he couldn't walk fast.

Not all postpositions require objects in genitive case. Some postpositions require ablatives. For instance:

—ից վերև —ից ներքև	above below	Անունս գրեմ տողից վերև, թե՞ տողից ներքև: Should I write my name above or below the line?
—ից առաջ —ից հետո	before after	Ցուցակում ձեր անունը իմ անունից առաջ է, բայց Տիգրանի անունից հետո: In the list your name comes before mine but after Tigran's

- * If the prepositions ըստ, առանց and postpositions հետ, մոտ and համար refer to pronouns ես, դու, մենք, and դուք, these pronouns stand in dative. Thus, “about me” translates as ինձ համար, (and not իմ համար), “near you” translates as քեզ մոտ, “without us” translates as առանց մեզ, “in you” translates as “քեզ մեջ”, “ձեզ մեջ” etc.

Some commonly used prepositions in English are rendered by case endings or a combination of case endings and postpositions in Armenian. We have already learned about many of these instances when we learned the cases of the Armenian language.

Preposition	Armenian case used	Examples
with	____-ի հետ or instrumental	Դու աշխատում ես Սամվելի հետ: You work with Samvel. Նա հացը դանակով կտրեց: She cut the bread with a knife.
to	dative	Նա գնդակը նետեց Հասմիկին: He threw the ball to Hasmik.
in	locative	Ես համալսարանում սովորել եմ դրա մասին: I learned about that in school:
at	____-ի մոտ (or) instrumental	Դռան մոտ ինչ-որ մեկը կա: There is someone at the door. Նա այժմ գրասենյակում է: He is at his office now.
since	ablative	Ես ժամը վեցից այստեղ եմ: I have been here since six o'clock.

DIALOGUE: ՀԱՄԱՑԱՆՑ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ / THE INTERNET AND SOCIAL MEDIA

_Դու օգտվում ես համացանցից:	Du ogtvum es hamats`ants`its?	Do you use the Internet?
_Այո, շատ հաճախ:	Ayo, shat hatshakh.	Yes, very often.
_Ինչի՞ համար ես համացանցն օգտագործում:	Inchi hamar es hamats`ants ogtagortsum?	What do you use the Internet for?
_Ես ունեմ Ֆեյսբուքյան էջ, էլ. փոստ և Թվիթերյան միկրոբլոգ: Բացի այդ համացանցով լուրերին եմ հետևում:	Yes unem Faysbuk`yan ej, el.p`ost yev T`vit`eryan mikroblog. Bats`i ayd hamatsantsov lurerein em hetevum.	I have a Facebook page, email and Twitter microblog. Besides, I follow the news via the Internet.
_Դու համացանցով ֆիլմեր դիտում ես:	Du hamats`ants`ov filmer ditum es?	Do you watch films via the Internet?
_Այո, ես համացանցով ֆիլմեր եմ դիտում:	Ayo, yes hamats`ants`ov filmer em ditum.	Yes, I watch films via the Internet.
_Դու Ֆեյսբուքի և Թվիթերի ակտիվ օգտատեր ես:	Du Feysbuk`i yev T`vit`eri aktiv ogtater es?	Are you an active user of Facebook and Twitter?
_Այո, ես Ֆեյսբուքի ակտիվ օգտատեր եմ: Ես շատ նկարներ եմ տեղադրում իմ էջում, հաճախ եմ կարծիքներ և մեկնաբանություններ գրում:	Ayo, yes Feysbuk`i aktiv ogtater em. Yes shat nkarner em teghadrum im ejum, hatshakh em kartsik`ner yev meknabanut`yunner grum.	Yes, I am an active Facebook user. I place many photos on my page, and often write opinions and comments.
_Իսկ Թվիթերի ակտիվ օգտատեր ես:	Isk T`vit`eri aktiv ogtater es?	And are you an active Twitter user?
_Ոչ, ես Թվիթերով հետևում եմ մի քանի մարդկանց: Բայց հազվադեպ եմ կարծիք գրում:	Voch, yes T`vit`erov hetevum em mi k`ani mardkants`. Bayts` hazvadem em kartsik grum.	No, I follow a few people via Twitter, but I rarely write an opinion in Twitter.
_Քեզ անհանգստացնում է անձնական տվյալների գաղտնիությունը:	K`ez anhangstats`num e andznakan tvyalneri gaghtniut`yuna`.	Are you worried about secrecy of personal data?
_Այո, ինձ համար շատ կարևոր է անձնական տվյալների գաղտնիությունը:	Ayo, indz hamar shat karevor e andznakan tvyalneri gaghtniutyuna l.	Yes, secrecy of personal data is very important for me.
_Խնդրում եմ ինձ ավելնել քո Ֆեյսբուքյան ընկերների ցանկին:	Khndrum em indz avelatsnel k`o feysbuk`yan a`nkneri ts`ankin.	Please add me to you Facebook friend list.

New Words

օգտվել	to use	տեղադրել	to place
համացանց	the Internet	կարծիք	opinion
հաճախ	frequently, often	մեկնաբանություն	comment, interpretation
էջ	page	հազվադեպ	rarely
էլ. փոստ	email	անհանգստացնել	to bother
լուրեր	news	անձնական	personal
հետևել	follow	տվյալներ	data
ակտիվ	active	գաղտնիություն	secrecy
պասիվ	passive	ցանկ	list
օգտատեր	user	անպայման	definitely

Վարժություններ / *Exercises*

1. Translate the following sentences into English.

1. Ես սիրում եմ ճամփորդել ինքնաթիռով:
2. Համակարգչի վրա գրքեր մի դրեք:
3. Հեռախոսով խոսելիս մի գոռացեք:
4. Դու լավ չես երգում, և պետք նորից փորձես:
5. Մենք ցածր ձայնով էինք խոսում, որ նա չարթնանա:
6. Ես սովորում եմ Երևանի պետական համալսարանում:
7. Բոլորը հույսները դրել են նախագահի վրա:
8. Մի մեծ զանգ է կախված իմ գլխի վերևում:
9. Կատուն փախավ և մտավ մահճակալի տակ:
10. Իմ սխալի պատճառով նա շատ փող կորցրեց:
11. Հայտարարությունը պետք է փակցնել բոլորի գալուց առաջ:
12. Փողոցի աղմուկի պատճառով մենք չկարողացանք լավ աշխատել:
13. Հակառակ մեր կամքին, բոլորը հեռացան սենյակից:
14. Ես օգոստոսի սկզբից Հայաստանում եմ ապրում:
15. Ըստ գրքի՝ չի կարելի արեգակին նայել:
16. Ձեր վերարկուն մի դրեք հատակին:
17. Չնայած իմ խնդրանքին՝ դուք չմոտեցաք ինձ:

18. Նախքան 2000 թ. Երևանում գործազուրկներ չկային:
19. Առանց ծնողների թույլտվության չի կարելի հեռանալ Հայաստանից:
20. Նա կքնի մինչև վաղը կեսօր:
21. Արի՜ նստի՞ր իմ կողքին:
22. Ո՞վ է նվագում ինձ համար:

2. Translate the following sentences into Armenian.

1. There are many stories in this book.
2. Put your hands on your back.
3. Go hide behind the tree.
4. Think instead of dreaming.
5. I entered the office.
6. May I come in?
7. There is something on your head.
8. I will come on time.
9. I opened the door with scissors.
10. I ran through the bushes.
11. You swam against the current.
12. The businessmen stood in front of each other.
13. She will go to bed after finishing the work.
14. We don't want to have a dog in our house.
15. He is going to his office.
16. It is two o'clock according to my watch.
17. She is a doctor by profession.
18. The letter B is between A and C.
19. The cat was under the table.
20. They began to argue instead of working.

3. Put the given words in correct order to form grammatically correct sentences.

1. հետ: աշխատում է, Արմենը, ինձ
2. հետևում: թաքնվեց, Նապաստակը, որսորդից, ծառի
3. էր, Գետի, ներքևից: լսվում, աղմուկը
4. ընթացքում: Մենք, այս ամենը, տասը, սովորել, տարվա, ենք
5. ամսվանից, ոչ մի տեղ, Ալիկը, հունվար, գնացել: չի

4. Choose the right word from the brackets and fill in the blanks.

(մոտ, հետ, վրա, միջև, տակ, դիմաց, հակառակ, ըստ, փոխարեն, միջով)

1. Աննան և Գոհարը զրուցում են իրար _____:
2. Տղան վազեց կրակի _____ և փրկեց իր քրոջը:
3. Նա հացի երկու շերտի _____ պանիր դրեց:
4. Շները կանգնած եմ միմյանց _____:
5. _____ Աստվածաշնչի Նոյն իջել է Արարատի գլխին:
6. Ծիտիկները կանգնել էին մեծ ծառի ճյուղերի _____:

Դաս Երեսունմեկերորդ

Conjunctions

In Armenian there are two types of conjunctions: coordinating and subordinating. Coordinating conjunctions tie together equal parts of a sentence, whereas subordinating conjunctions are used to connect a principle clause and a secondary clause.

The chart below contains the main coordinating conjunctions of the Armenian language:

Conjunction	Translation	Examples
և, ու	and	Նա դուռը բացեց և մտավ սենյակ: He opened the door and entered the room.
բայց	but	Մենք փորձեցինք բացել դուռը, բայց չկարողացանք: We tried to open the door but couldn't.
իսկ	and/while/but	Դասախոսը հարցեր է տալիս, իսկ ուսանողները պատասխանում են: The lecturer asks questions, while the students answer them.
թե	or (exclusive)	Գալի՞ս ես, թե՞ ոչ: Are you coming or not?
կամ	or (inclusive)	Վաղը կգտնենք այդ մարդուն, կամ կգնանք Վանաձոր: Tomorrow we will find that man, or we will go to Vanadzor.
սակայն	yet, however	Տարօրինակ է, սակայն ճշմարիտ է: It is strange, yet true.
և՛ և՛	both...and	Նրանք սիրում են և՛ խաշ, և՛ տոլմա: They like both khash and dolma.
կամ ... կամ	either...or	Կամ շունն է կերել դա, կամ կատուն: Either the dog or the cat has eaten it.
ոչ ... ոչ	neither...nor	Ես ոչ լսել եմ այդ մասին, ոչ էլ լսելու ցանկություն ունեմ: I have neither heard about that, nor I want to hear.

The chart below contains the main subordinating conjunctions of the Armenian language:

Conjunction	Translation	Examples
եթե	if	Եթե նրան խնդրեք, նա ձեզ կօգնի: If you ask him, he will help you.

թե արդյոք	whether	Զգիտեմ, թե արդյոք նա կկարողանա գալ: I don't know whether she will be able to come.
որ	that	Նա ասաց, որ կգա: She said that she would come.
որովհետև	because	Ես չեմ կարող գալ, որովհետև չափազանց զբաղված եմ: I can't come because I am too busy.
որպեսզի	so that, in order to	Ավելի մոտեցրեք դա, որպեսզի կարողանամ ավելի լավ տեսնել: Bring it nearer so that I can see it better.
մինչև	until	Եկեք սպասենք մինչև անձրևը դադարի: Let's wait until the rain stops.
քանի որ	since, as	Քանի որ նա պատրաստ չէր ժամանակին, մենք առանց նրա գնացինք: Since he wasn't ready in time we went without him.

DIALOGUE: ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ / POLITICS

_ Դու լսե՞լ ես լուրերը:	Du lsel es lurera`?	Have you heard the news?
_ Ոչ: Չեմ լսել: Ի՞նչ նորություն կա:	Voch. Chem lsel. Inch norut`yun ka?	No. I have not heard. What is new?
_ Ազատական կուսակցությունը հաղթել է ընտրություններում:	Azatakan kusakts`ut`yuna hagt`el e a`ntrut`yunnerum.	The liberal party won the elections.
_ Շատ լավ է:	Shat lav e.	Very good.
_ Լավ չէ: Ես ազատականների կողմնակից չեմ: Ես պահպանողականների կողմնակից եմ:	Lav che. Yes azatakanneri koghmnakits` chem. Yes pahpanoghakanneri koghmnakits` em.	It is not good. I am not for the liberal party. I am for the conservative party.
_ Իսկ ես ազատական կուսակցությանն եմ աջակցում: Նրանք լավ պատգամավորներ ունեն:	Isk yes azatakan kusakts`ut`yann em ajakts`um. Nrank` lav patgamavorner unen.	And I support the liberal party. They have good members of parliament.
_ Պատգամավորները լավ մարդիկ են, բայց նրանք վատ ծրագրեր ունեն: Աղքատների համար ոչ մի բան չեն առաջարկում:	Patgamavornera lav mardik en, bayts` nrank` vat tsragrer unen. Aghk`atneri hamar voch mi ban chen arajarkum.	The members of parliament are good people, but they have bad projects. They do not offer anything for the poor.

Բայց խոստացել են հարկերն իջեցնել:	Bayts` khostats`el en harkern ijets`nel.	But, they have promised to decrease taxes.
Այո, խոստացել են: Բայց ցածր հարկերից մենք չենք շահի: Կշահեն խոշոր հարկատուները:	Ayo. Khostats`el en. Bayts` ts`atsr harkerits` menk` chen` shahi. Kshahen khoshor harkatunera`.	Yes, they have promised. But we will not gain anything from low taxes. Big taxpayers will gain from it.
Համաձայն եմ: Ըստ քեզ ո՞վ կընտրվի Վարչապետ:	Hamadzayn em. A`st k`ez ov ka`ntrvi varchapet?	I agree. Who do you think will be the prime minister?
Կարծում եմ Գրիգորյանը կդառնա Հայաստանի Հանրապետության նոր Վարչապետը:	Kartsum em Grigoryana` kdar`na Hayastani Hanrapetut`yan nor varchapeta`.	I think Gevorgyan will become the new prime minister of Republic of Armenia.
Ես էլ եմ այդպես կարծում:	Yes el em aydpes kartsum.	I also thinks so.

New Words

լուրեր	News	կողմնակից	supporter
նորություն	something new, news	աջակցել	to support
կուսակցություն	political party	պատգամավոր	member of parliament
հաղթել	win	ծրագիր	project
ազատական	liberal	աղքատ	poor
պահպանողական	conservative	առաջարկել	support
ընտրություններ	elections	վարչապետ	prime minister
ընտրվել	to be elected	հարկ	tax
